

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزيك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հԹ՝ ՏԱՐԻ, 2010, ԹԻԻ 5 (335) - VOL. XXIX N° 5 - السنة التاسعة والعشرون - العدد الخامس

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ՎԱԶԷ՝ ՅԱՆՈՒՆ
ՀԱԻԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ»





**ՅԱԶՈՐՊԻՒՄ
ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ
ԳՐՈՒ ԲԱՆԱԿՆՈՒՄԻՆ
ՆՈՒՒՐՈՒՄԾ ՅԱՏՈՒԿ ԹԻՒ**



ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزىك مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԹ. ՏԱՐԻ, 2010, ԹԻՒ 5 (335)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ներսէս Արք. Բախտիկեան*,
 Գ. Թորոյեան, ԲաՖՖի Սիւլահեան,
 Սալբի Լատոյեան
 Եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողբի Զեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ձղուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.Ի Սեկուսի
 Եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 Եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա Եւ Աւստրալիա՝ \$55):



18

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ոգեկոչում 3
- Պատմութիւն 6
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 12
- Մեր Կորուստները 36



36



31

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 10
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԶԻՆՏԻՖԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆ ԱՅՈՒՄԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

(Գ.)

Յաղորդակցություններու եւ փոխադրամիջոցներու զարգացման շնորհիւ, աշխարհը այսօր դարձած է աւելի փոքր: Իսկ այդ փոքրութիւնը այսօրուան երիտասարդներուն կ'ընծայէ ուսման լայն կարելիութիւններ, ծամբորդութեան թէ համացանցի միջոցներով: Փաստ է, որ այսօր մեծ համեմատութիւններով աւելցած է իրենց երկիրներէն դուրս մասնագիտական բարձր կրթութիւն ստացող երիտասարդներուն թիւը:

Ուսման կարելիութիւններու յաւելումը ամէնէն աւելի նկատելի կը դառնայ երիտասարդ կիներու պարագային, ինչ որ իր անմիջական անդրադարձը կ'ունենայ մեր ընկերային եւ տնտեսական կեանքին վրայ: Օրէ օր աւելի մեծ թիւով կիներ բարձրագոյն ուսման կեդրոններ կը յաճախեն եւ գործի ասպարէզ կը նետուին: Այսպէս, ընտանիքներու եւ ընկերութիւններու եկամուտները կ'աւելնան: Ինչ որ դրական երեւոյթ է, մանաւանդ երբ իմանանք, որ նորագոյն վիճակագրութիւններու համաձայն, կիներ իրենց թոշակները ամէնէն աւելի կը ծախսեն... կրթական, առողջապահական եւ սննդագիտական նպատակներու համար:

Համաշխարհայնացումին երիտասարդութեան վրայ ունեցած դրական անդրադարձները ներկայացնել չի նշանակեր անոր ժխտական կողմերը չտեսնել կամ չխօսիլ մտահոգութիւններու մասին, որոնք կրնան ծակատագրական ըլլալ այսօրուան երիտասարդներէն շատերուն համար:

Եթէ լաւատեսութեան ակնոցը փոխարինենք յոռետեսութեան ակնոցով, պիտի տեսնենք որ այսօր մարդկային նոր ընկերութիւն մը կը կերտուի մեր աչքերուն առջեւ: Տեղեկութիւններով սնանող ընկերութիւնն է այդ, որուն մաս կազմող երիտասարդներէն իւրաքանչիւրը բազմապատիկ աւելի բան գիտէ՝ քան նախորդ դարերու երիտասարդը, եւ սակայն, բաղադրամասնաբայ այսօրուան աշխարհի տեղե-

կատուական հսկայ պաշարին, անհկաշատ աւելի նուազ բան գիտէ՝ քան նախորդ դարերու երիտասարդը ի՞ր օրերու տեղեկութիւններուն մասին:

Չարմանալի թուացող այս բաղադրականը ուշադրութեան արժանի միակ երեւոյթը չէ, որովհետեւ ինչպէս երիտասարդը, նոյնպէս ալ նոր կազմաւորուող ընկերութեան լեզուն տարբեր է իր նախորդներէն: Մարդկային սքանչելի լեզուն կամաց-կամաց կը փոխարինուի պատկերասփիւռի եւ համակարգիչներու պարզ ու մակերեսային, շուկայիկ լեզուով: Այսպէս է, որ հետզհետէ կը պակսի երիտասարդութեան հետաքրքրութիւնը գիրքին եւ թերթին հանդէպ, կը նուազի կարծիքներու փոխանակումն ու զրոյցը՝ հիմնական հարցերու շուրջ, կը տկարանայ անոնց յիշողութիւնը, կը խամրի անոնց երեւակայութիւնը եւ հրապարակ կու գայ համաշխարհայնացումի սերունդ մը, որ տեղեկատուական միջոցներու զոհը դարձած՝ ցերեկը գերին է համակարգիչին, իսկ գիշերը՝ պատկերասփիւռին եւ էլեկտրոնիկ խաղերուն:

Առանց յոգնութեան կամ ծիգի տեղեկութիւններու եւ գիտութեան արագօրէն տիրանալու մարմաջը երիտասարդութեան հոգիներուն մէջ կը ջլատէ տքնաջան աշխատանքի ոգին, կը բթացնէ համբերութեան եւ տոկունութեան անոնց նկարագրային գիծերը եւ զանոնք կը զրկէ մեծ դժուարութիւններ յաղթահարելու գնով՝ նուաճումներ կատարելու բերկրանքէն:

Այս մտահոգութիւնը, անշուշտ, տեղեկութիւններու փոխանցման ձեւին կամ միջոցներուն չի վերաբերիր, որքան նոյնինքն տեղեկութիւններուն, որոնք մարդկային քաղաքակրթութեան հարստացման եւ ճիշտացման ծառայելու փոխարէն, քարոզչական, սպառողական եւ աժան ժամանցի մտահոգութիւններով օրէ օր երիտասարդները կը պարպեն իրենց համամարդկային սկզբունքներէն եւ բարոյական արժէքներէն:



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ՝ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՉ, 2400 ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸ ՎԱԶԷ՝ ՅԱՆՈՒՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ»

**Հ.Ս.Ը.Մ.Ի Պոուէնոս Այրէսի մասնաձիւղ
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ**

Անձրեւը չկրցաւ արգելք հանդիսանալ այն փայլուն ձեռնարկին, որ կազմակերպուած էր Պուէնոս Այրէսի մէջ, Հ.Ս.Ը.Մ.Ի կողմէ՝ ի յիշատակ Ապրիլեան մեր նահատակներուն եւ մեր ինքնութեան պաշտպանութեան: Զեռնարկ, որուն ընթացքին յուզմունքն ու յիշողութիւնը ձեռք-ձեռքի տուած վազեցին:

Արժանթինի հայ համայնքը ծընունդ առաւ 1915-1923 թուականներուն, թուրքիոյ կողմէ գործադրուած Հայկական Յեղասպանութեան



վերապրողներով: 2010ին, Մեծ Եղեռնի 95ամեակը կը գուգարիպի Արժանթինի Հանրապետութեան 200ամեակի տօնակատարութեան: Երկիր մը, որ իր դռները բացաւ սիրալոյսով՝ ճնշումի, սովի ու ջարդի զոհ դասող ազգի մը զաւակներուն: Այստեղ, վերապրողները եւ անոնց յաջորդողները առիթը ունեցան ազատօրէն ապրելու, եւ նոյն ժամանակ բաժին բերին երկրի քաղաքական, ընկերային եւ տնտեսական զարգացման, անշուշտ միշտ կենդանի պահելով իրենց սեփական ինքնութիւնն ու արմատներու պատկանելիութեան համոզումը:

Արժանթինի կողմէ հռչակուած թիւ 26.199 օրէնքը, ի յիշատակ Հայկական Յեղասպանութեան, որ Ապրիլ 24ը կը հռչակէ «Հանդուրժողականութեան եւ ժողովուրդներու միջեւ յարգանքի օր», փաստ մըն է որ այս երկիրը յանձնառու է մարդկային



իրաւանց յիշատակման եւ արդարութեան հանդէպ:

Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը, հիմնուած 1927 թուականին, իրենց պապենական հողերէն աքսորուած հազարաւոր ընտանիքներ պահպանող միջավայր մը եղած է: Իր հիմնադրութենէն ի վեր շատ մը տասնամեակներ եւ սերունդներ անցած են, սակայն ինչպէս սկզբնական այդ ժամանակներուն, եւ հաւատարիմ իր հիմնադիր ուղեգրիին, Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը օրէ օր կը շարունակէ իր գործը, դաստիարակելով նորանոր սերունդներ, անոնց փոխանցելով մարմնակրթութեան եւ սկստութեան մարզական ու բարոյական բարձր արժէքները:

Անցեալ Ապրիլ 24ին, յիշատակուեցաւ Հայկական Յեղասպանութեան 95ամեակը, հայ ազգին համար իսկապէս նշանակալից թուական մը:

Յիշատակումներու ծիրին մէջ, եւ առողջ ու մարզական կեանքի գաղափարին համոզումով, Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը, Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, ծրագրեց եւ իրականացուց «Հայաստանը



կը վազէ՝ յանուն հաւասարութեան եւ յիշողութեան» մարաթիոնը: Այս աշխատանքին գործադրման նպատակով նշանակուեցաւ կազմակերպիչ յանձնախումբ մը, բաղկացած երրորդ եւ չորրորդ սերունդի հայերով:

Ծրագրին նպատակները եղան շատ եւ այլազան, հիմնականները ըլլալով՝ մէկ կողմէ Հայ Դատի ի նպաստ պայքարը աւելի լայնօրէն ծանօթացնել օտար շրջանակներուն, նորոյթ նախաձեռնութեան մը միջոցով, մասնակցողներու ընտանեկան բոլոր խաւերու ներկայութեամբ՝ մանուկներ, երիտասարդներ, ծնողներ ու մեծ հայրեր: Միւս կողմէ ցոյց տալ հայ ազգին յարգանքն ու երախտագիտութիւնը հանդէպ Արժանիքին, որ Յեղասպանութեան վերապրողները ընդունեց եւ գուրգուրաց առանց խտրութեան:

Կիրակի, 13 Յունիսի առաւօտեան ժամը 9.30էն սկսեալ, Արժանիքի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի Փայլերմոյի շրջանը գտնուող պարտէզներուն մէջ տեղի ունեցաւ «Հայաստանը կը վազէ՝ յանուն հաւասարութեան եւ յիշողութեան» մարաթիոնը: Արձանագրուողները աւելի ունեցան մասնակց

ցելու 3 քիլոմետր քայլելու կամ 8 քիլոմետր վազելու մրցումներուն: Ձեռնարկը տեղի ունեցաւ Փլասա «Արմենիա» կոչուած հրապարակին մօտ, ուր գետեղուած է հայկական խաչքար մը, հագլու մէկ քիլոմետր հեռու այն վայրէջն, ուր հայ համայնքը «Ո՛չ» ըսաւ ցեղասպան Քեմալ Աթաթիւրքի կիսանդրին գետեղելու փորձին:

Մրագիրը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ եւ լայն արձագանգ գտաւ թէ՛ հայ եւ թէ՛ տեղական մամուլին մէջ: Մասնակցեցան 2400 մարզիկներ, հայեր եւ ոչ-հայեր, եւ բոլորը հազան մեր սիրելի Շուազոյն դրօշին գոյները: Մասնակցողները ո՛չ միայն թիկունք կանգնեցան այս ձեռնարկին, այլեւ՝ իրենց մասնակցութեամբ ցոյց տուին իրենց աջակցութիւնը գաղափարի մը, ի յիշատակ մեր նահատակներուն:

Չորս սերունդ իրենց մասնակցութիւնը բերին միասնական կերպով, ցոյց տալով որ հայ համայնքը ողջ է, կը զօրանայ, կը յառաջանայ եւ պիտի շարունակէ իր պայքարը մինչեւ որ ամբողջ աշխարհը ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը:

Չորս սերունդներ կը փաստեն թէ հայութիւնը կ'ապրի: Երէկ՝ ցեղասպանութիւն մը հայ ժողովուրդին պատմու-



թիւնը փոխեց, իսկ այսօր՝ հայու զաւակներս կը հաւատանք կեանքին:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՄԲ

Այս առիթով կ'ուզենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց, որոնք կարելի դարձուցին «Հայաստանը կը վազէ» ծրագիրը՝ Ի.Ն.Ա.Տ.Ի.Ն (I.N.A.-D.I.) - (Խտրականութեան, Օտարատեցութեան եւ Ցեղապաշտութեան դէմ Ազգային Ինստիտուտ) եւ Արժանթինի Մարմնամարզի Քարտուղարութեան, որոնք հովանաւորեցին այս ձեռնարկը: Նաեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան՝ յանձինն դեսպան Վլատիմիր Կարմիրշալեանին եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ

Առաջնորդ՝ Գիսակ Արք. Մուրատեանին, որոնք նոյնպէս հովանաւորեցին այս միջոցառումը: Բոլոր հովանաւորներուն եւ հայ ընտանիքներուն, որոնք օժանդակեցին այս մեծածաւալ ձեռնարկին յաջողութեան, բոլոր հայ կազմակերպութիւններուն, հայ համայնքի դպրոցներուն, մամուլի միջոցներուն եւ բոլոր անոնց, որոնք քաջալերեցին ու մասնակցեցան այս ծրագրին իրագործման:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Direct Flights

PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@armenco.com

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



**Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԺԹ. ՄԱՍ**

Արդարեւ, ժողովուրդը եւ Հ.Մ.Ը.Մ. հետզհետէ գիրար հասկնալու եզրեր կը գտնեն: Փաստօրէն, հայ բազմութիւն մը 14 Մայիսին կը լեցընէ թատրոն Քիւրսալը, քաջալերելու կազմակերպիչ մարմնին ձեռնարկը ու ծափահարելու մարզիկները իրենց այլազան ճիգերուն մէջ:

Կեդրոնական Յանձնախումբը իր հերթական նիստին նկատի կ'առնէ, որ ըստ ներքին կանոնադրին, Ռաս Պէյրուժի եւ Նահրի մասնաճիւղերը կը թերանան իրենց պարտականութեանց մէջ, կ'որոշէ առանձին նամակով ազդարարել զանոնք:

Եղած ազդարարութիւնը իր բարերար ազդեցութիւնը կ'ունենայ: Ռաս Պէյրուժի մասնաճիւղը կը զրկէ իր տեղեկագիրը 24 Մայիս 1927ին թուագրով: Տեղեկագիրէն յտակ կը պարզուի, որ Ռաս Պէյրուժի մասնաճիւղը ծոյլ նստած չէ: Առաջին օրէն հիմնական աշխատանքի ձեռնարկելով, վերաքննութեան ենթարկելով անդամացանկը, մասնաւոր գործիչի մը միջոցով կարողացեր է յետնեալ եւ ներկայ ամսավճարները գանձել ու նաեւ ձեռնարկեր է պատուոյ անդամներու արձանագրութեան:

Մասնաճիւղը իր առաջին խումբին կողքին յառաջացուցեր է նաեւ երկրորդը ու ամրան ընթացքին կը պատրաստուի լողի մրցումի: Իր նիւթական նեղ վիճակը մասամբ բարւոքելու մտօք, ձեռնարկած է վիճակահանութեան: Վարչութիւնը անբաժան աշխատանք տարած է Կեդրոնական Յանձնախումբին սարքած երեկոյթին, հետամուտ է խաղաղալորի հարցին բարւոք լուծման:

Կեդրոնական Յանձնախումբը, Ռաս Պէյրուժի մասնաճիւղին գործունէութիւնը գոհունակութեամբ արձանագրելէ ետք, իր հերթական նիստին դարձեալ օրակարգի նիւթ կ'ընէ Ջահլէի մասնաճիւղի փափաքին գոհացում տալու հարցը: Խումբին մեկնումի թուականը որոշելէ ետք, կը դիմէ շոգեկառքի ընկերութեան՝ կէս գին երթեւեկի արտօնութեան, որպէսզի միւս կէսն ալ կարգադրուի: Ստիպուած 150 նուիրատուս կը զրկէ, իւրաքանչիւրը 10 դահեկանոց, որպէսզի ծախեն:

Որոշուած օրը խումբը կը մեկնի Ջահլէ: Խումբին կ'ընկերանայ Ժիրայր Պալեան: Վերադարձին կը զեկուցէ եղած ընդունելութեան, կանոնաւոր եւ հետաքրքրական խաղարկութեան մասին, որ վերջացած է Պէյրուժի յաղթանակով: «Այս այցելութիւնը, - կ'արձանագրէ ատենագրութիւնը, - ստեղծած է մեծ խանդավառութիւն Ջահլէի մէջ, սատարելով միութեան տարածման գործին տեղույն վրայ»: Կեդրոնական Յանձնախումբը չ'ուշանար իր շնորհակալութիւնը յայտնելու Ջահլէի մասնաճիւղին՝ «ցոյց տուած սիրալիր վերաբերման եւ եղբայրական ոգիին համար» (Ատենագրութիւն, 19 Յունիս 1927):

Ամրան եղանակին, Կեդրոնական Յանձնախումբի անդամներէն ոմանց օգափոխութեան երթալու պատճառով, կանոնաւոր հերթական ժողովները Յունիս 19էն սկսեալ կ'ընդհատուին, իսկ երբ 25 Սեպտեմբերին դարձեալ կանոնաւոր նիստերու կը սկսին, Յակոբ Հայրապետեան մանրամասն կը զեկուցէ ստացուած նամակներուն բովանդակութեանց մասին, - Ռաս Պէյրուժ, Դամասկոս, Լառնաքա, Նահր, Ջահլէ, Նիկոսիա, - մասնաճիւղերէն զատ նաեւ «Նոր Սերունդ»ի խմբագրութեանէն: Ասոնց բոլորին ալ պատշաճ կերպով պատասխանուեր է:

Սեպտեմբեր 25ի նիստին, նկատելով որ Պէյրուժի գոյգ մասնաճիւղերուն գործունէութեան վեցամսեայ շրջանը լրացեր է, կ'որոշէ զանոնք ընդհանուր անդամական ժողովի հրաւիրել Հոկտեմբեր 9ին, Որբերու Ընկերակցութեան ակումբին մէջ ուր պիտի կարգացուէր նաեւ Կեդրոնական Յանձնախումբին տեղեկատուութիւնը:

«Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի երկու քոյր մասնաճիւղերու-Ռաս Պէյրուսի եւ Նահրի - ընդհանուր ժողովները տեղի ունեցան անցեալ Կիրակի:

«Ըստ կարգի լուսնեցան մասնաճիւղերուն եւ Կեդրոնական Մարմինն տեղեկատուութիւնները, որոնք ներկայ պայմաններուն կրցած էին իրենց վրայ դրուած պարտականութիւնները իրենց կարելութեան սահմաններուն մէջ կատարել:

«Արդար ըլլալու համար հոս պէտք կը զգամ յիշել մասնաւորապէս Ռաս Պէյրուսի մասնաճիւղին կատարած աշխատանքները նիւթական մարզին մէջ: Տրուած հաշուետուութենէն կը հասկըցուէր, որ ան կարողացած է իր շատ կարճ ժամանակամիջոցին ապահովել կլոր գումար մը պատրաստ՝ յանձնելու նորընտիր վարչութեան:

«Նոյնպէս եւ գնահատական խօսք ըսել Կեդրոնական Մարմնի գործունէութեան մասին: Այո, հակառակ իր ունեցած ծանր աշխատանքներուն, կանոնաւորելու երկու մասնաճիւղերուն մարմնակրթական գործը, կրցած էր սարքել տարեկան մարզական երեկոյթ մը, որուն հասոյթը տրամադրուած էր ողիմպիականի յատուկ մարզական գործիքներու, որոնք հասած էին Փարիզէն:

«Կեդրոնական մարմինը նկատելով որ շատ դժուար պիտի ըլլար ներկայ պայմաններու տակ շարունակել երկու մասնաճիւղերու գործունէութիւնը քաղաքիս մէջ, որուն իբրեւ հետեւանք տեղի ունեցաւ ուժերու բաժանում, կ'առաջարկէր վերցնել Կեդրոնական Յանձնախումբը, միացեալ երկու քոյր

1939. միջ-մասնաճիւղային տողանցք Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի դաշտին վրայ:



մասնաճիւղերը եւ ստեղծել նախկին դրուութիւնը, այսինքն ունենալ մէկ վարչութիւն եւ մէկ մասնաճիւղ:

«Բերուած այս առաջարկը առանց վիճաբանութեան ընդհանուրին կողմէ միաձայնութեամբ ընդունուեցաւ:

«Նոր վարչութեան ընտրութիւնը եղաւ օրինաւոր սահմաններու մէջ եւ տուաւ հետեւեալ արդիւնքը.- Ալպէր Յակոբեան, Յակոբ Հայրապետեան, Մարտիկ Պէյլէրեան, Ժիրայր Պալեան, Յովհաննէս Շահինեան, Յ. Աճէմեան» («Ազդակ, 1927 թիւ 66):

Դամասկոսի մասնաճիւղը, թատրոն Գրիստալի մէջ, 6 Նոյեմբեր 1927ին կը սարքէ թատերական երեկոյթ մը, ղեկավարութեամբ Աբովեանին ու մասնակցութեամբ Տիրան Աճէմեանին: Հասարակութիւնը զիտակցելով Հ.Մ.Ը.Մ-ին կատարելիք դերին, հո՞՞նք բազմութեամբ ներկայ կ'ըլլայ թատրոն, որուն բեմին վրայ կը բացուէին «Աշխարհի դատաստան», թատրերգութեան յաջորդական վարազոյրները:

«Ազդակ»ի 10 Դեկտեմբեր 1927ի թիւին մէջ կը կարդանք «Հ.Մ.Ը.Մ. յաղթական» խորագրին տակ. «Հակառակ անոր որ Հ.Մ.Ը.Մ-ի տեղույս Ա. խումբը վերակազմուած է հինգ շաբաթէ ի վեր, կարելի չէր որեւէ եւ նոյնիսկ որեւէ բարեկամական մրցում ունենալ:

«Այս տարուան տեղական օտար խումբերուն մէջ աչքի կը զարնուին Ռընեսանս, Սփորթիվ, Սէն Ժոզէֆ համալսարանի խումբերը, որոնք իւրաքանչիւրը իր մէջ կը համրէ կարող խաղցողներ:

«Անցեալ Կիրակի տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մրցումը Ռընեսանս-Սփորթիվի հետ, այս վերջնոյն դաշտին վրայ, հակառակ անոր որ որեւէ յայտարարութիւն եղած չէր. հետաքրքիրներու հայ բազմութիւն մը ժամա-



1955. Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի ֆուտպոլի խումբը:

նակէն առաջ շրջապատած էր դաշտը: Հ.Մ.Ը.Մ. յաղթեց 0-3 ով»:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսթի վարչութիւնը «Ազդակ»ի 10 Դեկտեմբեր 1927ի թիւին մէջ «Կոչ»ով մը կը դիմէ Պէյրուսթի յարգելի հայ հասարակութեան:

«Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսթի մասնաճիւղի վարչութիւնը իր գործին ձեռնարկելէ ի վեր, նիւթական եւ բարոյական ոչ մէկ զոհողութեան առջեւ կանգ առած է, առաջ տանելու համար իր շրջանի հասարակութեան բոլոր հատածներուն եւ խաւերուն պատկանող երիտասարդներուն եւ պատանիներուն ֆիզիքական-բարոյական զարգացումը, որ միութեանս նպատակն իսկ է, եւ որ, օտար ամբողջ վրայ ցան ու ցրիւ փռուող մեր ժողովուրդին ազգային ոգին պահպանելու եւ մեր պատանեկութիւնը այլասերումէ փրկելու ամենակենսական ձեռնարկն է:

«Սակայն չափազանց անձուկ նիւթական միջոցները թոյլ չեն տուած մեզի մեր այնքան դժուարին գործը հարկ եղած չափով արդիւնաւորելու:

«Եւ, հակառակ մեր անդուլ աշխատանքին, եւ ամիսներէ ի վեր մեր չարաչար փնտուտուքին, դեռ չկրցանք ունենալ դաշտ մը, ոչ իսկ հաւաքավայր մը, ուր կարենային քով-քովի հա-



ւաքուիլ գոնէ շաբաթը մէկ երկու անգամ մեր սկաուտները, մեր մարզիկները, մեր անդամները: Ուստի, այդ բոլոր պակասը լրացնելու համար, վարչութիւնս որոշած է Սկաուտական եւ Մարզական Ֆոնտանոնով տոմսակներ շրջաբերութեան մէջ դնել:

«Քաղաքական ժողովը արտօնած է: Մենք կոչ կ'ընենք մեր յարգելի

հասարակութեան, որ սրտբաց ընդ առաջ երթայ մեր նպատակին եւ սիրալոյսով սպասէ մեր «Սկաուտական ու Մարզական Ֆոնտի տոմսերուն, որպէսզի կարենանք աւելի լայն չափով տարածել մարմնակրթանքը եւ անոր հետ ազգային ոգին նոր սերունդին մէջ, որոնց այնքան պէտք ունի ան, մեր այս լքումի օրերուն:

«Մենք կը հաւատանք մեր ժողովուրդի լուսաւոր բնազդին եւ կը յուսանք թէ Պէյրուսթի մեր գիտակից եւ ազնիւ հասարակութիւնը պիտի պսակէ իր պատանիներուն եւ երիտասարդներուն բաղձանքը»:

Եւ այդ բաղձանքը կը կատարուի, երբ «խումբ մը եռանդուն եւ զուարթ երիտասարդներ, Նոր Տարուան եւ Ս. Մնունդի տօնական օրերուն, թողուցած իրենց ամէն տեսակ հանձնարքերը, իրենց ընտանեկան կեանքի քաղցրութիւնը, Մնունդի մոմագարդ ծառի ե ճոխ սեղաններու շուրջ բոլորուելու թանկագին վայելքը, գիշերն ի բուն, թափառեցան դռնէ դուռ, Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական եւ Մարզական Ֆոնտի համար նիւթական նուէրներ արձանագրելու:

«Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդներու այս ելոյթը արժանի է ամէն գնահատանքի եւ շնորհաւորութեան:

«Նոյնքան շնորհաւորելի է Պէյրուսթի յարգելի հասարակութիւնը, որ առանց բացառութեան, բոլորն ալ գրկաբաց ընդունեցին զանոնք եւ հանձնարով բացին իրենց քսակները:

«... Խրախուսիչ եւ մեծ սփոփանք է Պէյրուսթի մեր հայ հասարակութեան այս ազնուական վերաբերումը դէպի իր երիտասարդութիւնը: Մենք կը հաւատանք որ հայ հոգին դեռ կ'ապրի մեր ժողովուրդին սրտին խորը: Իցիւ թէ



այս սիրալիր վերաբերմունքը մեր ունեւոր դասին դէպի իր երիտասարդներու միութիւնը չսահմանափակուէր միայն Պէյրուսի մէջ ու տարածուէր մեր բոլոր հայ գաղութներուն:

«Ուրախութիւն չէ՞, երբ արդէն Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղը, շնորհիւ իր վարչութեան անխոնջ ջանքերուն, ունի իր սեփական դաշտը հիմա, ուր շաբաթը գոնէ մէկ անգամ Պէյրուսի հայ մատաղատի պատանիները պիտի հաւաքուին քաղաքէն ու ժխորէն հեռու մարզերու իրենց մարմինը եւ անոր մէջ իրենց հոգին» («Ազդակ», 21 Յունուար 1928):

Հալէպէն թղթակից մը «Ազդակ»ին կը գրէ.

«... Մենք կ'ուզէինք, որ Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութիւնը թեթեւ շունչ մը բերէր. քիչ մը ծփանք, կեանքի յատկանիշ մը յառաջացնէր հալէպահայ կեանքի կայուն մակերեսին վրայ:

«Հալէպահայ կեանքի մակերեսը իր հայկական կեանքի խորքով փոթորկելու վճռականութեամբ հրապարակ իջած Հ.Մ.Լ.Մ.ը, նպատակ որդեգրած էր փոթորիկ յարուցանող սերունդը պատրաստել, ու իր կորովի ոգիով, մեծ հաւատքով կը դիմաւորէր 1927 տարին ձեռնարկով մը, 9 Յունուարին, որպէս տարեդարձի տօնակատարութիւն իր կազմութեան, տեսակ մը հաշուեքննութեան օր, իր անդամներուն ներկայութեանը»:

Վարչութեան ատենագրութեան մէջ, այս երեկոյթին առնչութեամբ կը կարդանք.

«Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի կազմութեան Ա. տարելիցին առթիւ միամեայ գեկուցում տալ, ճշդիւ անդամներուն թիւն ու դիր-

քը, շեշտել անդամավճարի հարցը, հրաւիրել Բ. Արեւեան եւ Կ. Թեճիրեան նուագելու, իսկ երեկոյթին վիճակահանութեան եւ ընտանեկան զանազան խաղերուն հոգը յանձնել Կոպեռնիկ Մանսուրեանին: Հաւաքոյթը կատարել Ազգ. Մանկապարտէզի սրահին մէջ»:

Այս երեկոյթը որոշուած թուականին տեղի չ'ունենար, որովհետեւ վարչութիւնը նկատի կ'առնէ մասնաճիւղին տարելիցին թուականը, դաշտահանդէսին չբաժնուած շքանշաններուն պարագան, մանաւանդ միութեան նիւթական հասոյթ մը գոյացնելու մտահոգութեամբ, վարչութիւնը կ'որոշէ երեկոյթին աւելի պաշտօնական բնոյթ տալ լայն յայտագրով ու զայն հանրութեան ներկայացնել Առաջնորդ Հօր նախագահութեամբ: Երեկոյթը տեղի կ'ունենայ 16 Յունուարին:

Հալէպի մասնաճիւղին, Ռամի դաշտին վրայ, հաշիւներու վերջնական քննութիւնը ցոյց կու տայ որ փոխանակ «չափ գոյանալու մենք 132 դըշ. ողջ դրամ ալ վնասեցինք»:

Լուտեր Մասպանաճեան, վարչական հերթական նիստին, 10 Յունուար 1927ին, կ'առաջարկէ կազմակերպել Հալէպի մէջ, առաջին անգամն ըլլալով, միջազգային Ֆուլթպոլի մրցաշարք: Ժողովը առաջարկը ընդունելով նախաձեռնարկ կ'ըլլայ:

(Շար. 19)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar

Europe Hotel

Feel at home, away from home...

Reservations Yerevan
 32-38, Hanrabedoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europohotel.am

www.europohotel.am



ԱՓՐԻԿԵԱՆ ՄՈՆՏԻԱԼԻ ԴԱՍԵՐԸ

սէր հասարակութիւնը հետեւած ըլլար բոլոր խումբերու վերջին շրջանին արձանագրած արդիւնքներուն, ինչպէս նաեւ տեղեակ ըլլար անոնց ներքին «խոհանոց»ին, ապա այդքան ալ անակնկալներ չկային: Եթէ Ֆրանսայի կամ Իտալիոյ նման խումբերու կանուխ հրաժեշտը նկատուեցաւ անակնկալ, ապա Ֆրանսացիք «թաղուած» ներքին վէճերու մէջ, իսկ իտալացիք արդէն «սպառած» կազմով կը մասնակցէին մոնտիալին: Պատահական չէր որ Ֆրանսայի ֆուլթայլի տիտաններէն Միշէլ Փլաթինի, տեղեակ ըլլալով իր երկրի ազգային խումբին պարզած վիճակին, մոնտիալի նախօրեակին կը յայտարարէր, թէ Ֆրանսացիք դժուար թէ կարենան անցնիլ երկրորդ հանգրուան: Իսկ Իտալիոյ ազգային խումբի մարզիչ Լիփի, նոյնպէս մոնտիալի նախօրեակին իր նշած թեկնածուներուն մէջ զանց կ'առնէր իր խումբը:



Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Ափրիկէի մէջ տեղի ունեցած մոնտիալը, որ իր վրայ կեդրոնացուց միլիոնաւոր մարզասէրներու ուշադրութիւնը, արդէն պատմութիւն է: Անոր մասին գրուեցան բազմաթիւ յօդուածներ, կատարուեցան զնահատումներ, մատնանշուեցան թերութիւններ, գովաբանուեցան յաղթանակներն ու նուաճումները: Ուրախացողները չեն մոռնար այն պահերը, զորս ապրեցան: Հանդիսատեսները պիտի չմոռնան վուլվուզլայի շատերուն հաճելի, իսկ ուրիշներուն տհաճ նուագները: Մարզիկները իրենց հետ տարին յիշատակներ, իսկ մեծ ակումբները «որսացին» նորանոր մարզիկներ: Մարզական աշխարհին կը մնայ դասեր քաղել անոր փորձառութենէն, յառաջիկային աւելի յաջող մոնտիալ մը կազմակերպելու եւ ըմբոշիներու համար:

Առաջին հերթին պէտք է արձանագրել, որ այս մոնտիալի ամենաշատ անակնկալները արձանագրուեցան առաջին հանգրուանին: Անշուշտ, ֆուլթայլի տրամաբանութեան մէջ անակնկալ հասկացողութիւնը քիչ մը յարաբերական է: Սակայն կարգ մը խումբերու յաջողութիւնը եւ ուրիշներու ձախողութիւնը նկատուեցան անակնկալներ: Բայց եթէ մարզա-

Ուշագրաւ էր ափրիկեան խումբերու ձախողութիւնը: Վեց մասնակիցներէն միայն Ղանայի կազմն էր, որ թէ՛ տպաւորեց եւ թէ՛ դրական արդիւնքներով հեռացաւ մոնտիալէն: Մինչ կազմակերպիչ Հարաւային Ափրիկէ, Նիճերիա, Փղոսկրեայ Ափունք, Ալճերիա եւ մանաւանդ փորձառու Քամբուրոն ոչինչ կրցան իրագործել, եւ ոչինչ ներկայացուցին որպէս ֆուլթայլ: Ի հակառակ ափրիկեան կազմերուն, ասիացիք եւ Ովկիանիոյ ներկայացուցիչները տպաւորեցին: Հարաւային Քորէա եւ Ճափոն ներկայացուցին արագ եւ զարգանալու հակամէտ ֆուլթայլ: Աւստրալացիք նոյնպէս դրական արդիւնքներով հեռացան, հակառակ որ չկրցան անցնիլ երկրորդ հանգրուան, մինչ Նոր Զելանտա եղաւ մրցաշարքի միակ կազմը, որ անպարտելի մնաց: Այլ խօսքով, բացի Հիւսիսային Քորէայէն, մնացեալները ճակատաբաց վերադարձան իրենց երկիրը: Եւրոպական երկիրները առաջին հանգրուանին իսկ ծանր «կորուստներ» ունեցան: Մասնակցող 13 երկիրներէն եօթն առաջին հանգրուանին դուրս մնացին: Իսկ հարաւային

ամերիկացիք ունեցան հարիւր առ հարիւր յաջողութիւն: Քոնքաքաֆի մասնակիցներէն միայն Հոնտուրան է որ առաջին հանգրուանին հրաժեշտ տուաւ մոնտիալին: Երկրորդ եւ մասնաւորաբար երրորդ հանգրուաններուն արդէն աւելի բերեղացաւ մասնակիցներուն մակարդակին պատկերը: Այսպէս, ամերիկացիք, Քոնքաքաֆի մասնակիցները եւ ասիացիք մեկնեցան իրենց երկիրները, իսկ Հարաւային Ամերիկայէն միայն Ուրուկուէյի կազմն էր որ յաջողեցաւ հասնիլ կիսաւարտական: Ի հարկէ, անոնց նուաճումին մէջ մեծ դեր ունեցաւ... բախտը, մասնաւորաբար Ղանայի դէմ մրցումին վերջին վայրկեաններուն: Հոս արդէն երեւան եկաւ եւրոպական երկիրներու ֆուլթպոլի մակարդակին առաւելութիւնը: Բ. հանգրուան անցնող վեց կազմերէն երեքը յաջողեցան հասնիլ կիսաւարտական եւ անոնք գրաւեցին առաջին երեք դիրքերը: Այս արդիւնքներուն լոյսին տակ հաւանաբար ՖԻՖԱ-ն պէտք է վերանայի ցամաքամասերու մասնակցութեան համեմատութեան պատկերը:



լի նշանակած երկրորդ կողմ նշանակուեցաւ ձեռքի օգնութեամբ: Անշուշտ, այսօրինակ թերութիւններ միշտ ալ արձանագրուած են մոնտիալներու ընթացքին, կը մնայ որ ՖԻՖԱ-ն միջոցներ ձեռք առնէ անոնց առաջը առնելու կամ առնուազն նուազագոյնի իջեցնելու համար: Օրինակ, արդէն կ'առաջարկուի թեքնիք միջոցներու որդեգրումը: ՖԻՖԱ-ի նախագահը արդար հաստատում մը կատարեց, երբ յայտարարեց որ ֆուլթպոլը թեքնիք նման խաղ է, այլ՝ յարատեւ շարժող խաղ մըն է եւ թեքնիք միջոց-

ները կրնան այդքան ալ օգտակար չըլլալ: Այս իմաստով անցեալ տարի ԵՈՒ-էՖԱ-ի որդեգրած ձեւը լաւագոյնն էր: Յաւելեալ կողմի իրաւարարներ եւ սխալները արդէն նուազագոյնի իջան:

Այս մոնտիալի ուղագրաւ երեւոյթներէն էր նաեւ մարզիկներու «բացակայութիւնը»: Խումբերու որդեգրած խաղաոճերը յաճախ պատճառ դարձան, որ յայտնի խաղացողներ կամ «աստղ»եր գրեթէ չէզոքանան կամ չուրի մէջ մնան: Այսպէս, եթէ ախոյեան Սպանիոյ կազմէն Տաւրո Վիլա փայլեցաւ շնորհիւ իր նշանակած կոլերուն, ապա Թորէս գրեթէ չուրի մէջ մնաց: Ինիէսիթա, Չաւի, Արնսո իրենց խմբային խաղարկութեան շնորհիւ աչքի զարկին: Հոլանտայի կազմէն Ռոպպեն ասյնքան ալ չերեւաց: Գերմանացի Քրոզէ, հակառակ հինգ կոլ նշանակելուն, այնքան փայլուն չէր: Անցեալ տարուան աշխարհի լաւագոյն ֆուլթպոլիստը՝ Մեսսի գրեթէ «բացակայ» էր: «Աստղ»երու կազմէն՝ Պրագիլէն ոչ ոք փայլեցաւ: Փորթուգալցի Ռոնալտօ ճիգեր թափեց «բաներ» մը ընելու, սակայն հեռու էր իր խաղաոճէն: Այլ խօսքով անհատ ֆուլթպոլիստներ չկային այս մոնտիալին: Ու եթէ ուրուկուէյցի Ֆորլան ընտրուեցաւ մոնտիալի լաւագոյն ֆուլթպոլիստը, ապա այդ ընտրութիւնը կարելի է արդար նկատել: Անոր նշանակած սքանչելի կոլերուն շնորհիւ Ուրուկուէյ հասաւ կիսաւարտական:

Այս մոնտիալին եւս մեծ դեր ու թերութիւն ունեցան իրաւարարները: Կարգ մը մրցումներու պարագային անոնց որոշումները վճռորոշ եղան մրցումի ելքին: Մեծագոյն գայթակղութիւնը արձանագրուեցաւ Արժանթին-Մեքսիքա մրցումին, որովհետեւ Թեւէզի նշանակած առաջին կողմ բացայայտ օֆ-սայտ էր: Իսկ Գերմանիա-Անգլիա մրցումին, երբ արդիւնքը ի նպաստ գերմանացիներուն էր, անգլիացի Լամփարի նշանակած յստակ կողմերով երթուեցաւ թէ՛ կողմի եւ թէ՛ կեդրոնի իրաւարարին կողմէ: Այս կողմ այնքան աղմուկ բարձրացուց, որ ՖԻՖԱ-ի նախագահը քանի մը օր վերջ ստիպուեցաւ ընդունիլ սխալը եւ ներողութիւն խնդրել Անգլիոյ ֆետերասիոնէն: Սակայն արդեօք այդ ներողութիւնը բաւարար էր: Անգլիացիք դուրս մնացին: Պատմութիւնը փոխուեցաւ: Իսկ ամենակարեւորը, անարդարութիւնը չարագործեցաւ: Այլ մրցումներու ընթացքին եւս կային սխալներ: Իտալիա-Նոր Զելանտա մրցումին, Նոր Զելանտայի նշանակած կողմը նոյնպէս օֆ-սայտ էր, Պրագիլ-Փղոսկրեայ Ափունք մրցումին Պրագի-

լի նշանակած երկրորդ կողմ նշանակուեցաւ ձեռքի օգնութեամբ: Անշուշտ, այսօրինակ թերութիւններ միշտ ալ արձանագրուած են մոնտիալներու ընթացքին, կը մնայ որ ՖԻՖԱ-ն միջոցներ ձեռք առնէ անոնց առաջը առնելու կամ առնուազն նուազագոյնի իջեցնելու համար: Օրինակ, արդէն կ'առաջարկուի թեքնիք միջոցներու որդեգրումը: ՖԻՖԱ-ի նախագահը արդար հաստատում մը կատարեց, երբ յայտարարեց որ ֆուլթպոլը թեքնիք նման խաղ է, այլ՝ յարատեւ շարժող խաղ մըն է եւ թեքնիք միջոց-



Չորս տարի ետք, Պրագիլիոյ մէջ կայանալիք մոնտիալին, ֆուլթպոլիստներ հասարակութիւնը պիտի փափաքի աւելի լաւ կազմակերպուած մոնտիալի մը ակնատեսը ըլլալ: Աւելի կոլառատ եւ հետաքրքրական մրցումներ, իրաւարարական նուազ սխալներ, ֆուլթպոլիստներու սլացքներ եւ խումբերու յարձակողական խաղեր: Մարզիչներ վերատեսուցեան պիտի ենթարկեն իրենց ռազմավարութիւնը, խաղացողներ պիտի փորձեն յաւելել ճիգ թափել:

Սակայն այս բոլորը յաճախ կը մոռցուին մոնտիալի առօրեայ հեւքին մէջ, եւ ֆուլթպոլի «խեղժ» ամբողջ գնդակի համար մղուող պայքարին ծարաւ՝ կը սպասէ միմիայն յաղթանակներ, ի գին ամէն ինչի:



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԴՈՒ ՄԷՋ

Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԷՊ



«Արարատեան» կարգ ստացողներու յիշատակի նկար՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներու հետ:

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Հինգշաբթի, 15 Յուլիս 2010ին, Հայէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ միութեան սկստական բարձրագոյն կարգի՝ «Արարատեան»ի վկայականաց եւ մետալներու տուչութեան հանդիսութիւնը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեանի, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկստ. Խորհուրդի անդամներու, ինչպէս նաեւ՝ Հայէպի զոյգ վարչութիւններու եւ մասնաճիւղի Սկստ. Խորհուրդի անդամներու:

Օրուան հանդիսավար եղբ. Արմէն Քէօզկէրեան բարի գալուստի խօսքերէ ետք հրաւիրեց ատենապետ եղբ. Րաֆֆի Տէր Աբրահամեանը՝ փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը:

Եղբ. Տէր Աբրահամեան իր խօսքին մէջ ըսաւ, որ այս օրը Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանին համար պատմական օր մը պիտի ըլլայ, որովհետեւ բոլորս ակնատես պիտի դառնանք «Արարատեան» կարգի տուչութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն ի վեր առաջին անգամը ըլլալով տեղի կ'ունենայ: Շրջանային Վարչութեան ատենապետը ըսաւ, թէ իւրաքանչիւր սկստ. ամբողջացնելէ ետք անհրաժեշտ պայմաններ, կը ստանայ համապատասխան կարգեր եւ աստիճաններ: «Արարատեան» կարգը եւս ունի իր պայմանները, սակայն բացառաբար մէկ անգամ, զանց առնելով կարգին տեսական, գործնական եւ փորձառական հանգրուաններուն պայմանները, յատուկ որոշումով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը այդ կարգին կ'արժանացնէ Սուրիոյ շրջանին 16 նախկին Շրջանային խմբապետներ եւ խմբապետուհիներ:

Եղբ. Տէր Աբրահամեան իր խօսքը փակեց շնորհաւորելով «Արարատեան» կարգ ստացող քոյրերն ու եղբայրները, մաղթելով որ նուիրեալ ու անսակարկ աշխատանքով անոնք ստանան հետագային:

տար կը հանդիսանան Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին: Հանդիսութեան ընթացքին կիրարկուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն նուագով իրենց մասնակցութիւնը բերին դաշնակի վրայ Ռուզան Պարսումեան, իսկ քանոնի վրայ՝ Շողիկ Տէկիրմէնճեան եւ Անժէլ Շէօճմէլեան: Սայաթ Նովայի «Քամանչա» երգով հանդէս եկաւ Ատոմ Քէհէան: Գեղարուեստական յայտագիրը աւարտեցաւ ստեղծնաչարային գործիքի նուագով, Գաբօ Իվէքեանի կատարողութեամբ:

Ապա, օրուան հանդիսավարը բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբ. Կարպիս Գապասագալեանն ու Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Րաֆֆի Տէր Աբրահամեանը, որոնց ձեռամբ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան անդրանիկ «Արարատեան» կարգին տուչութիւնը: Կարգը ստացան եղբայրներ Մանուկ Քէօզկէրեան, Պօղոս Պայէոգեան, Վահէ Քիւրքճեան, Գէորգ Գարակաւուրեան, Վիգէն Գապագեան, քոյրեր Փէկի Աւրնեան-Պապօղեան, Քնար Ֆուռնճեան-Քէօզկէրեան, Սօսի Ֆուռնճեան, Սեդա Կէրկէրեան-Տէր Աբրահամեան, Մեղրիկ Մանճեան-Ապահունի, Զեփիւռ Սուղալեան, Գոհար Պոտիկեան-Թորոսեան եւ Հուրինա Պէրպէրեան-Վերտանեան: Զեռնարկէն բանաւոր բացակայեցան եղբայրներ Լեւոն Իսկէնտէրեան, Միսաք Տէկիրմէնճեան եւ քոյր Քնար Գալաճեան-Ղազարեան, որոնք իրենց կարգերը պիտի ստանան հետագային:

Կարգի տուչութենէն ետք, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալ-



եան: Ան շնորհաւորական խօսքեր փոխանցելէ ետք ըսաւ, որ այսօր աննախընթաց օր մըն է Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան համար, որովհետեւ վաստակաւոր Շրջանային նախկին խմբապետներ ու խմբապետուհիներ կ'արժեւորուին «Արարատեան» կարգի յուշամետալներով: Եղբ. Գապասազալեան յայտնեց, որ մենք ժառանգորդներն ենք վերածնած եւ վերամկրտուած այն սերունդին, որ քալեց Տէր Զօրի անապատներէն, եւ պատահական չէ, որ այսօրեան հանդիսութիւնը, որ շարքին առաջինն է, տեղի կ'ունենայ այս շրջանին մէջ, որովհետեւ սուրիահայութիւնը այն գաղութն է, որ մեր բոլոր գաղթօճախներուն տուաւ գոյատեւելու ապրումը եւ աւազի վրայ գրուած այբուբենը իբրեւ ոսկեայ կտակ փոխանցելու օրինակը:

Հանդիսութեան աւարտին, Շնորհք Քհնյ. Տէր Արթինեան



Օրուան հանդիսավար եղբ. Արմէն Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասազալեան:

շնորհաւորեց «Արարատեան» կարգի արժանացած քոյրերն ու եղբայրները եւ ըսաւ, որ այսօրուան հանդիսութիւնը եզակի կը նկատուի Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ-ը իր նշանաբանով՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ով կը շարունակէ իր առաքելութիւնը՝ ջահը փոխանցելով սերունդէ սերունդ: Քահանայ Հայրը իր խօսքը եզրափակեց ըսելով, թէ այսօրուան հանդիսութեան կ'ար-

ժեւորուին Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ վաստակաւոր Շրջանային խմբապետներն ու խմբապետուհիները, որոնք երկար տարիներ ծառայեցին Հ.Մ.Ը.Մ-ին եւ անոր ջահը փոխանցեցին յաջորդ սերունդներուն:

Հոսկ, հանդիսութիւնը փակուեցաւ Քահանայ Հօր «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն:

ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.- «ԱՐԱՐԱՏ»Ի

ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ՝ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՇՈՏ ԵՊՍ.

ՄԵԱՑԱԿԱՆԵԱՆԻ, ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝ ՏՏՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՖՐԷՏԻ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ

Թղթակից Գահիրէ

16 -18 Յուլիս 2010ին, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի կազմակերպութեամբ տեղի ու-

նեցաւ պասքեթպոլի բարեկամական մրցաշարք մը, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»ի, Գահիրէի Ս. Թերեզայի եւ Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ»ի երէց տղոց խումբերուն:

Բարեկամական

մրցումները տեղի ունեցան եգիպտահայ միջ-ակմբային մրցաշարքէն շաբաթ մը առաջ եւ նուիրուեցան վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներ Երուանդ Թումայեանցի եւ Վարուժան





Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուքի տղոց պասքեթպոլի խումբը Գալիոնի Ազգային Առաջնորդարանին առջև:

Գազանճեանի յիշատակին: Մրցումներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուք տիրացաւ երկու բաժակի, մինչ դաշտի տէրերը բաւարարուեցան մէկ բաժակով:

Պէյրուքի խումբը իր բաժակներուն տիրացաւ պարտութեան մատնելէ ետք Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-Կամքը՝ 85-52 արդիւնքով (տէր եւ տիկին Տիգրան Գալայճեանի կողմէ նուիրուած բաժակ) եւ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ը՝ 82-78 արդիւնքով (Վարդան եւ Հէրի Գազանճեաններու կողմէ նուիրուած բաժակ, ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի երկար տարիներու վաստակաւոր ատենապետ եղբ. Վարուժան Գազանճեանի):

Հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ» իր միակ բաժակին արժանացաւ յաղթելէ ետք Ս. Թերեզային՝ 79-40 արդիւնքով (Տէր եւ տիկին Կարօ Թումայեանցի կողմէ նուիրուած բաժակ, ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան երկար տարիներու անդամ եղբ. Երևանդ Թումայեանցի):

Երէջ տղոց մրցումներուն աւրնթեր, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի 14 եւ 12 տարեկանէն վար տղոց խումբերը բարեկամական մրցումներ կատարեցին տեղական խումբերու դէմ: 14 տարեկանէն վար տղոց խումբը 79-18 արդիւնքով պարտութեան մատնեց Փեթրոսփոր խումբը եւ տիրացաւ տէր եւ տիկին Յա-



Պեյրուքի տղոց պասքեթպոլի խումբը Եգիպտոսի պետական թանգարանին առջև:

կոր Աւետանեաններու նուիրած բաժակին, իսկ 12 տարեկանէն վար մինիպասքէթի տղոց խումբը 25-15 արդիւնքով Մատինէթ Նասր խումբին յաղթելով՝ արժանացաւ Դրօ Կէվրէկեանի նուիրած բաժակին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ-ԽՐԱԽՃԱՆՔ

Մրցաշարքին երկրորդ օրը, Շաբաթ, 17 Յուլիսի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի «Լ. եւ Ս. Գարագաշեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն-խրախճանք մը, որուն ներկայ եղան յատկապէս Պէյրուքէն հրաւիրուած, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան, Սուտանի հայոց հոգեւոր հովիւ Գաբրիէլ Աբեղայ Սարգիսեան, Գահիրէի Թեմական ժողովի ատենապետ Անդրանիկ Մեսրոպեան, «Կոկանեան» սրահի ատենապետ Նուպար Սիմոնեան

եւ Աղեքսանդրիոյ Թեմական ժողովի նախկին ատենապետ Լեւոն Գաղթացեան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ եղբ. Սուրէն Պայրամեան: Ան նշեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած դերը Սփիւռքի տարածքին եւ յիշեց Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ»ի երկարամեայ անդամ ու ատենապետ Երևանդ Թումայեանցն ու Վարուժան Գազանճեանը, որոնց մահուան տարեիցները կը զուգարկուէր Յուլիս ամսուան:

Երեկոն շարունակուեցաւ ընթրիքով եւ ազգային-յեղափոխական երգերու ունկնդրութեամբ:

Եւօրեայ այս մրցաշարքին յաճախ ներկայ գտնուեցան ձեռնարկը հովանաւորող Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան, հայ կաթողիկէ համայնքի Առաջնորդ Գրիգոր Օգոստինոս Եպիսկոպոս Գուսան, Գահիրէի Թեմական ժողովի ատենապետ Անդրանիկ Մեսրոպեան, Գահիրէի Քաղաքական ժողովի ատենապետ Գէորգ Երզնկացեան, մրցաշարքի նախագահ եղբ. Ֆրէտի Գարակէօզեան, Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի ատենապետ Վիգէն Ճիգմէճեան, Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի ատենապետ Կարօ Աբգարեան, Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»ի փոխ ատենապետ եղբ. Պերճ Միսքճեան եւ Ս. Թերեզայի ատենապետ ժողով Սարգիս:



Բարերարը եւ հանդիսութեան ներկայ եկեղեցական հայրեր:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՄ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏԱՎԱՅՐ՝ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ



ԱՆԷՔ Յասրըճեան ԱՄՄԱՆ

Լ նթացիկ տարուան սկաուտական ձեռնարկներու շարքին, Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի սկաուտները ներկայ գտնուեցան Քրիստոսի մկրտավայր՝ Յորդանան գետի հայկական նորակառոյց եկեղեցոյ հիմնարկէքի հանդիսութեան:

Այս առիթով, Ամմանի մասնաճիւղի Ա. եւ Բ. կարգի սկաուտները, իրենց պատասխանատուներուն ընկերակցութեամբ, մեկնեցան Քրիստոսի մկրտավայրը, Ամմանէն 45 վայրկեան հեռու:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան յորդանանահայ գաղութի ազգային մարմիններու ներկայացուցիչներ, ՀՕՄ-ի եւ

Հ.Մ.Ը.Մ-ի վարչութիւններ եւ մեծաթիւ ազգայիններ:

Հանդիսութիւնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին նրաւ գով: Հնչեց «Մեր հայրենիք»ը: Արտասանուեցան շնորհակալութեան խօսքեր՝ ի պատիւ Փրանսահայ բարերար պրն. Կարապետեանի, որ պիտի հոգայ իր հօրը յիշատակին կառուցուելիք Ս. Կարապետ եկեղեցոյ բոլոր ծախսերը:

Յորդանանի Առաջնորդ Վահան Արք. Թոփալեան պատարագեց Երուսաղէմէն ժամանած եկեղեցական հայրերու ներկայութեան:

Պատարագէն ետք, սկաուտներ ուղղուեցան Յորդանանի նախկին մայրաքաղաքը՝ Սալթ, ուր այցելեցին տեղւոյն Ս. Գէորգ հրաշագործ եկեղեցին: Ապա, քաղաքին հին թաղերէն անցնելով, անոնք տեսան Յորդանանի Ապտալա Ա. թագաւորին բնակարանը, Յորդանանի առաջին երկրորդական վարժարանը եւ համբրու դպրոցը:



Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի ակումբին մէջ:



Սկաուտներ Սալթի Ս. Գեորգ Եկեղեցւոյ մէջ:

Երեկոյեան, սկաուտներ տուն վերադարձան պատմական օրուան մը անջնջելի յիշատակներով: Այլ առիթով մը, մասնաճիւղին սկաուտական խումբը մի-

օրեայ պտոյտ մը կատարեց դէպի Դամասկոս, ուր ծանօթացաւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին, այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ, Սետնայա սրբավայր եւ տեսարժան այլ վայրեր:

ԱՄՄԱՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ 2010-Ի ԲԵՂՈՒՄԻ ԱՌՕՐԵԱՆ

Թղթակից ԱՄՍԱՆ

2010ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի սկաուտական կազմը ունեցաւ սեմինարներով, պըտոյտներով եւ արշաւներով հարուստ տարեշրջան մը, որ նպատակադրեց պատրաստ եւ սկաուտական պատասխանատու նոր քաւրեր:

Մարտին, սկաուտներ միօրեայ ճըմեռնային բանակում մը կատարեցին «Շնեյրը» հաստատութեան բանակավայրին մէջ: Բանակումին խմբապետութիւնը վարեց քոյր Ռանիա Նալոյեան: Յայտագիրը կեդրոնացաւ ապագայ փոխ խմբապետներ պատրաստելու աշխատանքին վրայ:

Բանակավայր հասնելով, սկաուտներ լարեցին իրենց վրանները եւ մասնակցեցան յայտագրի բոլոր բաժիններուն: Այս առիթով, քոյր Ալին Պէննէեան դասախօսեց հայ յեղափոխական հայուհիներու մասին: Հիւր խմբապետ մը ներկայացուց կողմնացոյցով եւ



աստղերով ուղղութիւն ճշդելու նիւթին մասին: Տեղի ունեցաւ ձեռնարկ աշխատանքի հետաքրքրական ռալի մը, որ բանակողներուն սորվեցուց նոր հմտութիւններ:

Ապրիլին, Յորդանանի տեսարժան վայրերու ծանօթացման ծիրէն ներս, սկաուտներ հաճելի արշաւ մը կատարեցին դէպի Մեռեալ Ծովու շրջան: Մասնաճիւղին պատասխանատու կազմին կողքին, արշաւին մասնակցեցան Բ. կարգի սկաուտներ: Արշաւը ունեցաւ 9 քըմ. երկարութիւն, որմէ ետք՝ սկաուտները միացան գայլիկներուն եւ միաս-

նաբար պտոյտ մը ունեցան Յորդանան գետի շրջան: Միասին ճաշելէ ետք, բոլորը ուրախ տրամադրութիւններով վերադարձան Ամման:

Տարուան ընթացքին, շաբաթական հաւաքոյթներէ ետք, խմբապետներ եւ աստիճանաւորներ ունեցան սեմինարներ: Փետրուարին կազմակերպուած սեմինարը կեդրոնացաւ հետաքրքրական միջոցներով գիտելիքներ փոխանցելու ձեւերուն վրայ: Հիւր դասախօս մը խօսեցաւ զանազան տարիքներու համեմատ գործելակերպ որդեգրելու ձեւերուն մասին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Նարինե Տեմիրճեան ԱՄՍԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ամմանի մասնաճիւղի սկաուտական աշխատանքներուն եզրափակումը կատարուեցաւ միօրեայ բանակումով մը, որ տեղի ունեցաւ 24 Յունիս 2010ին, Ամմանի վերանորոգուած սկուսներն մէջ:

Բանակումին յայտադիրը եղաւ բաւական ճոխ եւ ընդգրկեց զանազան խաղեր, գործնական աշխատանքներ եւ տեսական դիտելիքներ: Մեծ խանդավառութիւն ստեղծեց ձիրքերու ռալին, որ բացառապէս մասնակիցներու կարողութիւնները: Քոյր Կասիա Տէմիրճեան դասախօսեց Արցախի մասին: Քոյրը սահիկներով ներկայացուց Հայկական արծուերոյնին պատմութիւնը եւ հերոսական պայքարը:

Օրուան յոգնութենէն ետք, սկումը հաւաքուեցան ծնողներ, որոնք մասնակցեցան այս առիթով կազմակերպուած վիճակահանութեան մրցումին եւ ընթրիքին:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating / air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐՊԻԵԱՆ 35ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵԶԱԿԻ ԵՂԱՆ ԲՈՒՈՐԻՆ ՀԱՄԱՐ



**Սարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ**

ՀՄԸՄԻ Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 35րդ մարզախաղերը իրենց աւարտին հասան Կիրակի, 4 Յուլիս 2010ի կէս լիցերին, Պըրմինկհամ Հայ Աթոլի շրջափակէն ներս, Նաւասարդեան ուրախ մթնոլորտի մը մէջ, բազմահազար Հ.Մ.Ը.Մ.ասէրներու ներկայութեամբ:

Նաւասարդեան մարզախաղերը եզրափակող Յուլիսի առաջին շաբաթավերջը յատկանշուեցաւ երիտասարդութեան տիրական ներկայութեամբ, ինչ որ եկաւ անգամ մը եւս փաստելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ը այն միակ կազմակերպութիւնն է, որ հայ երիտասարդութեան սրտին կը խօսի՝ իր նպատակով, ծրագիրներով ու առաքելութեամբ:

Եզակի այս մարզախաղերուն փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ասէրներու եւ հա-

մակիրներու ներկայութեամբ: Նախքան հանդիսութեան սկիւրը, մարզադաշտ ժամանող հանդիսատեսներուն բարի ժամանց ընծայեց երիտասարդ ու խոստմնալից երգչուհի Լարա Ղարիպեան՝ փունջ մը գեղեցիկ երգեր հրամցնելով:

Օրուան յայտագիրը սկիզբ առաւ ժամը ճին: Շրջանի Սկսուտ. Խորհուրդին առաջնորդութեամբ մարզադաշտ առաջնորդուեցան Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Ճորճ Ժամկոչեան, «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական - 2010» եղբ. Պերճ Ժամճեան, ընկերակցութեամբ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանի:

Օրուան խօսնակներն էին քոյրեր Նորա Չափարեան (հայերէն) եւ Նայիրի Տէրտէրեան (անգլերէն), որոնք ներկաները ոգեւորեցին՝ Նաւասարդեան մարզախաղերու 35 տարիներու արձանագ-

րած յաջողութիւնները մատնանշելով եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ծանօթացրնելով:

Նախքան պաշտօնական յայտագրին սկսիլը, ներկաները վայրկեան մը յոտնկայս լուրթեամբ յարգեցին հայ ժողովուրդի ազատագրական պայքարին ընթացքին զոհուած ազատամարտիկներուն եւ մասնաւորաբար 18 Յունիսին, Ղարաբաղի սահմաններուն վրայ նահատակուած զինուորներ Մնացական Գասպարեանի, Արիաք Բարսեղեանի, Էտուարդ Մանուկեանի եւ Պարոյր Մելքոնեանի յիշատակը:

Յարգուեցաւ նաեւ յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, եւ յատկապէս վերջերս Հայաստանի մէջ մահացած Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղի մարզիչներէն եղբ. Լեւոն Հապէշեանի:

Դրօշակի տպաւորիչ արարողութիւնը կատարեց շրջանի արի-արեւոյշ-





Ձախէն աջ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան:

ներէ կազմուած դրօշակակիրներու խումբը, որ Շրջանային Վարչութեան շեփորախումբին ազգայնաշունչ եղանակներով, հաստատակամ քայլերով, մարզադաշտ ներկայացուց Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Գալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեւեց պատուոյ հիւրերուն եւ կատարեց դրօշակի արարողութիւն՝ հետեւելով Մ. Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներուն, զորս դարձեալ նուագեց Շրջանային Վարչութեան շեփորախումբը:

Այնուհետեւ, հեծերանիւով մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի հեծիկի նորակազմ խումբը՝ գլխաւորութեամբ Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հեծիկի խումբը բազմիցս յաղթանակներու առաջնորդած եւ Հ.Մ.Ը.Մ.ի ու Լիբանանի հեծելարձաւի ախոյեան հանդիսացած եղբ. Միաք Թերզեանի:


Ապա, հանդիսավարները ներկայացուցին օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոսի ներկայացուցիչ Հայկ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալ-

եան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Վիգի Մարաշեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Թիւֆէնքեան, Ազգային Վարչութեան ատենապետուհի Ռիմա Պօղոսեան, Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Ստեփան Պոյաճեան, Գալիֆորնիոյ 29րդ շրջանի քոնկրէսական էտրմ Շիֆ, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 35րդ մարզախաղերու նախա-

գահ ճորճ Ա. Ժամկոչեան, «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական - 2010» Պերճ Ճամճեան եւ տիկինը՝ Նորմա, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետուհի Արուս Մելքոնեան, Հարաւային Գալիֆորնիոյ Հ.Բ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Պերճ Շահպաղեան եւ էջմիածնական թեմի ներկայացուցիչ Ժողէֆ Կանիմեան, նաեւ՝ Կլէնտէյի հանրային վարժարաններու խնամակալ մարմնի ատենապետ Կրէկ Գրի-



Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ ճորճ Ա. Ժամկոչեան:



«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2010» եղբ. Պերճ Գամձեան, Առաջնորդ Մուշեղ Արք. Սարտիրոսեան եւ քոնկրետսէն Էտրմ Շիֆ:

գորեան, Նաւասարդեան 33րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Վահագն եւ Պայծառ Թովմասեան, Ամերիկեան Սկաուտութեան ներկայացուցիչներ, հայկական վարժարաններու տնօրէններ, անցեալի պատուոյ նախագահներ, «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, հիւրեր, ծնողներ, բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ:

Առաջին հերթին շնորհաւորական ելոյթ ունեցաւ քոնկրէսական Էտրմ

Շիֆ, որ շնորհաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 35րդ մարզախաղերը՝ նորանոր յաջողութիւններու մաղթանքներով բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ը, շրջանի երիտասարդութիւնը մաքուր միջավայրի մը մէջ համախմբելու եւ անոնց օգտակար ծրագիրներ հրամցնելուն համար:

Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան, որ բարի գալուստ մաղթելէ

ետք ներկաներուն, ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը կ'ապրի իւրայատուկ ժամանակաշրջան մը, որուն անցնող քանի մը տարիները պատմական եղան, արձանագրուած նուաճումներուն շնորհիւ: Մենք երբեք այսքան հաստատակամ չենք եղած մեր երեխաներու ապագայ կարիքներուն նկատմամբ, որքան այսօր:

«Մեր յաջորդ սերունդը ընտրութեան առիթը ունի եւ մենք պէտք է յաջողութեամբ կապենք զայն մեր միութեան: Մենք պէտք է զօրակցինք անոր, հասկնանք զայն եւ հաւատք ընծայենք անոր»:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի իրականացուցած նուաճումներուն անդրադառնալով, եղբ. Արթինեան թուեց Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի երկրորդ կեդրոնին գնումը, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան «Թեքոյա» բանակավայրին սեփականութիւնը, նոր կեդրոնի վերանորոգման ամբողջացումը, Փասատինայի «Ազատամարտ», Պրոպէնքի «Սիփան» եւ Լոս Անճելըսի մասնաճիւղերուն զբասնեակներ եւ մարզադաշտեր ունենալու իրողութիւնը եւ, վերջապէս, «Գէորգ Անտոնեան» սրահին իրականացումը Հ.Մ.՝





Ը.Մ.Ս. ի նոր կեդրոնէն ներս:

Ապա, եղբայրը շնորհակալութիւն յայտնեց այն հարիւրաւոր անդամներուն, որոնք իրենց կարեւոր դերը ունեցան այս բոլորին իրականացման մէջ: Իսկ խօսքը տողանցելու պատրաստուող Հ.Մ.Ը.Մ. ի շարքերուն ուղղելով, եղբայրը վստահեցուց անոնց, թէ ամէն ինչ իրենց համար կը կատարուի, որովհետեւ անոնք են Հ.Մ.Ը.Մ. ի ապագան:

Եղբ. Արթինեան առիթը պատեհ նկատելով անգամ մը եւս հանրութեան ներկայացուց «տիպար Հ.Մ.Ը.Մ. ական-2010» տիտղոսին արժանացած եղբ. Պերճ Ժամճեանը, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ. ի Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Ճորճ Ա. Ժամկոչեանը:

Այնուհետեւ, ան յայտարարեց Երջանային Վարչութեան կողմէ յառաջիկայ տարուան համար ստեղծուած կրթաթոշակները, որոնք նուիրուած են հետեւեալ Հ.Մ.Ը.Մ. ականներուն եւ կը հովանաւորուին անոնց ընտանիքներուն կողմէ: -

- Երջանի առաջին Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Օվայեանի.
- Երջանի Հ.Մ.Ը.Մ. ի մայր մասնաճիւղի առաջին ատենապետ եղբ. Յարութ Բարսեղեանի.
- Հ.Մ.Ը.Մ. ական Ֆուլթայոյիստ եղբ. Յովհաննէս Ժանիկ Խաչատուրեանի.
- Արենոյշ քոյր Նաթալի Սարգիսեանի.

● Երջանի Հ.Մ.Ը.Մ. ի հիմնադիր անդամ եղբ. Զէք Տէր Պողոսեանի.

● Հ.Մ.Ը.Մ. ի Երջանային Վարչութեան անդամ եղբ. Հայկ Յովսէփեանի.

Այնուհետեւ տեղի ունեցաւ Երջանային ընդհանուր խմբապետուհիի պաշտօնատուելութիւն, որուն արժանացաւ երկար տարիներ շրջանի սկաուտական բաժանմունքէն ներս մեծ ներդրում ունեցած եւ սկաուտական բոլոր աստիճաններուն ու պաշտօններուն, ինչպէս նաեւ Երջանային խմբապետուհիի պաշտօնին արժանացած քոյր Թալին Հինտոյեան: Քոյր հանրութեան ներկայացուց Երջանային Վարչութեան մօտ սկաուտականի կապ եղբ. Փիէր Մանուկեան: Երջանային ընդհանուր խմբապետի երդումը առաւ նախորդ շրջանի Երջանային ընդհանուր խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեան, իսկ նշեալ պաշտօնին ուսնոցները յանձնեց եղբ. Սթիւ Արթինեան: Քոյր Թալին Հինտոյեանի պաշտօնատուելութիւնը մեծ ոգեւորութեամբ ընկալուեցաւ ներկաներուն, յատկապէս՝ սկաուտական շարքերուն կողմէ, որոնք սկաուտական յատուկ ծափերով ողջունեցին զայն:

Հ.Մ.Ը.Մ. ի կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորական ելոյթ ունեցաւ փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանը եւ ըսաւ. «Նաւասարդեանի այս մարզական ու ազգային խրախճանքը 35րդ անգամ ըլլալով կարելի եղաւ իրականացնել, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. ը սիրող ու յարգող ժողովուրդին: Չորս օր





տեևող այս իւրայատուկ ազգային համախմբումը անգամ մը եւս պսակուեցաւ յաջողութեամբ, շնորհիւ այն բազմահարիւր կամաւորներուն՝ վարչական կամ ոչ, Հ.Մ.Ը.Մ.ի անդամ կամ համակիր, որոնք ամէն գոհողութիւն յանձն առին, ի սէր Հ.Մ.Ը.Մ.ին: Այն Հ.Մ.Ը.Մ.ին, որ ամբողջութեամբ նուիրւած է հայ մանուկին, պատանիին ու երիտասարդին ֆիզիքական ու ազգային դաստիարակութեան: Մենք բոլորս մաս կը կազմենք այս հսկայ ընտանիքին, որ տարածուած է աշխարհի բոլոր կողմերը, ուր հայ կայ: Զեղի կը վստահեցնեմ, թէ հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն հայ երիտասարդութեան դաստիակութեամբ զբաղող կամաւորներ կան»:

Եղբայր Պալեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոն-

նական Վարչութեան անունով շնորհաւորեց Շրջանային Վարչութիւնը Նաւասարդեան մարզախաղերու յաջողութեան համար եւ շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր յանձնախումբերուն, որոնք մասնակից դարձան այդ յաջողութեան:

«Պատիւ ձեր բոլորին, սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ, վարչականներ, յանձնախումբեր, անդամներ եւ ծնողներ, որովհետեւ ձեր բոլորին նուիրեալ աշխատանքին շնորհիւ է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կրնայ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը», եզրակացուց ան:

Հայրական իր օրհնութիւններն ու շնորհաւորանքները փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ նախ հոգեկան

իր գոհունակութիւնը յայտնեց պատմական այս պահուն ներկայ գտնուելուն համար եւ ըսաւ.

« Առաջին հերթին, ես հայրական սիրով եւ օրհնութեամբ կ'ողջունեմ մեր մարզիկները, մեր սկաուտները, որոնք անցնող ամիսներուն պատրաստուեցան եւ վերջին քանի մը օրերուն իրենց աւարտական խաղերը կատարեցին, իսկ քիչ ետք պիտի ստանան իրենց յաղթական բաժակները: Սակայն միաժամանակ, մենք բոլորս սիրելիներ, պիտի վկայենք իրենց խորիստ գնացքը եւ տողանցքը եւ պիտի վերապրինք ու ապրինք, թէ ինչպէ՞ս Հ.Մ.Ը.Մ.ը «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով կ'առաջնորդէ մեր ժողովուրդի մատղաշ սերունդը: Հետեւաբար, օրհնեալ ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի վաստակաւոր բոլոր նուիրեալները, որոնք Նաւասարդեան մեր պատմական անցեալով, այսօր անգամ մը եւս պատմութիւնը վկայակոչելով, մեր յաղթական հերոսները եւ տիպարները վերապրեցնելով՝ մեր կեանքին մէջ ներկայութեան կը վերածեն այս պահուն»:

Սրբազանը իր յատուկ ողջոյնները փոխանցեց Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահին՝ Ճորճ Ա. Ժամկոչեանին եւ «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» Պերճ Ճամճեանին, իսկ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ «Հայ կնոջ տարուան» հռչակման առիթով, ան անգամ եւս օրհնեց եւ գնահատեց իգական սեռի ներկայացուցիչներու





ազգային, եկեղեցական եւ հայրենա-
նուէր ծառայութիւնը՝ ընդգծելով մա-
նաւանդ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերու նը-
ւիրեալ ծառայութիւնն ու առաքելու-
թիւնը:

Եզրակացնելով իր պատգամը,
Առաջնորդը շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի
Շրջանային Վարչութիւնն ու խոյան
մարզիկները եւ հաստատեց. «Հասած է
պահը վկայելու եւ հպարտութեամբ հե-
տեւելու Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքին: Մեր
աղօթքը եւ մաղթանքն է, ուր որ Հ.Մ.-
Ը.Մ. կայ, այնտեղ ըլլայ նոր սերունդի
դաստիարակութիւն, կարգապահու-
թիւն եւ օրինակելի ընթացք ու գնացք:
Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը, խրոխտ շարքերը թող
ամրանան եւ խրոխտ շարքերով տողան-
ցեն մեր Հ.Մ.Ը.Մ.ականները: Հ.Մ.Ը.Մ.ի
ու մեր անձի Եռագոյն դրօշը ծածանի
հպարտութեամբ, միշտ յաւերժ, ոչ
միայն այս մարզադաշտին վրայ, այլ
սփիւռքեան մեր բոլոր օճախներէն ներս
թող տողանցեն անոնք, ինչպէս հայրե-
նիքէն ներս, Արցախէն ներս, թէ Զա-
ւախքէն ներս, ու մանաւանդ մեր երազ-
ներու իրականացման ճամբով՝ ազատ,
անկախ եւ միացեալ հայրենիքէն ներս,
Արարատի գագաթին, կոչելով եւ ըսե-
լով՝ կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը, կեցցէ՛ հայ ազգը,
յաւերժ ապրի Հայաստանը, օրհնեալ ըլ-
լաք դուք սիրելիներ եւ պատիւ բոլոր-
րիդ»:

Փոխանցուած խրախուսական եւ
իմաստալից պատգամներէն ետք,

սկսաւ այնքան սպասուած Նաւասարդ-
եան տողանցքը: Շրջանային Վարչու-
թեան հովանաւորած եւ Ոսկան Արիս-
եանի գլխաւորած շեփորախումբին ազ-
գայնաշունչ եւ ոգեւորիչ եղանակներով
տողանցեց Հ.Մ.Ը.Մ.ի ողջ ընտանիքը:
Յաջորդաբար տողանցեցին շրջանի
Հ.Մ.Ը.Մ.ի 17 մասնաճիւղերը: Անոնք
Հ.Մ.Ը.Մ.ականի յատուկ հպարտու-
թեամբ տողանցեցին՝ ինքնավստահ ու
յաղթական:

Բոլոր տողանցողներն ալ Հ.Մ.-
Ը.Մ.ականի ինքնավստահութեամբ բա-
րեւեցին պատուոյ հիւրերուն ու զիրենք
խրախուսող ծովածաւալ բազմութեան,
ապա գրաւեցին իրենց նշանակուած տե-
ղերը մարզադաշտին վրայ:

Եքերթը սկսաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին
ծնունդ տուած Լոս Անճելըսի մասնա-
ճիւղով: Տողանցողները հպարտու-
թեամբ բարեւեցին ներկաներուն եւ
յատկապէս մասնաճիւղի երկար տարի-
ներու անդամ եւ «տիպար Հ.Մ.-
Ը.Մ.ական-2010» տիտղոսին արժանա-
ցած եղբ. Պերճ Ճամճեանին, ապա, առ
ի գնահատանք՝ շնորհաւորական յու-
շանուէր մը յանձնեցին անոր:

Գեղեցիկ էր նաեւ Սան Ֆեռնանտո
հովիտի «Մասիս» մասնաճիւղին պատ-
րաստած ձեռնային աշխատանքը, որ
կը ներկայացնէր մասնաճիւղին «Մա-
սիս» անունը վեհացնող արծիւի գոյգ
թեւերը՝ խորհրդանշելով Մեծ ու Փոքր
Մասիսները: Մասնաճիւղը նոյն աշխա-

տանքին փոքր օրինակը նուիրեց պա-
տուոյ նախագահին:

Ուրախալի էր լսել մանաւանդ Հ.Մ.-
Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի աղջ-
կանց մարզիկուհիներ Քրիստինէ Քեքէ-
նէկեանի եւ Արփինէ Ամիրխանեանի՝
Հայաստանի պասքեթպոլի ազգային
հաւաքականին մէջ ներգրաւման եւ
անոնց արձանագրած յաղթանակնե-
րուն մասին:

Օրուան խօսնակները գնահատական
խրախուսիչ արտայայտութիւններով
ներկայացուցին մասնաճիւղերը եւ
անոնց ներկայ պատկերը:

Այնուհետեւ, յանձնուեցան Նաւա-
սարդեան մարզախաղերու գլխաւոր
առանցքը հանդիսացող մարզական
մրցումներուն ախոյեանական բաժակ-
ները, որոնք յաղթական մասնաճիւղե-
րուն յանձնուեցան Մուշեղ Արք. Մար-
տիրոսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան փոխ ատենապետին,
Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 35րդ մար-
զախաղերու պատուոյ նախագահին,
«տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ին, Շրջանա-
յին Վարչութեան ատենապետին եւ
Շրջանային Վարչութեան մօտ մարզա-
կանի կապ եղբ. Ժանօ Գահվէճեանին
կողմէ:

Յայտագիրին վերջին բաժինով, Շըր-
ջանային Սկառուտ. Խորհուրդին կողմէ
Նաւասարդեանի դրօշը յանձնուեցաւ
պատուոյ նախագահին:

Մարզական խումբերու յաղթանակ-
ները եւ մանաւանդ իրենց գաւակներու
տողանցքը վայելած հանդիսականները
հոգեկան մեծ գոհունակութեամբ տե-
ղափոխուեցան փառատօնին շրջափա-
կը՝ մասնակցելու համար Նաւասարդ-
եան մարզախաղերը եզրափակող փա-
ռատօնին աւարտական յայտագիրին,
որուն ընթացքին ելոյթ ունեցան Ժողէֆ
Գրիգորեան եւ Անթուան Պէգճեան:
Յայտագիրին վերջին երգիչն էր Յա-
րութ Փամպուլեքեան, որ իր ճոխ երգե-
րու փունջով աննախընթաց ուրախ
մթնոլորտ մը ստեղծեց մարզկային ծո-
վու վերածուած փառատօնին շրջափա-
կը, ուր Նաւասարդեան խրախճանքը
շարունակուեցաւ մինչեւ կէս գիշեր:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 35ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԶԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ԻՆՔՆԻՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ

Մարտ Բեշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Շաբաթ, 26 Յունիս 2010ի երեկոյեան, արտասովոր եռուզեռի մէջ էին Կլէնտէյլի «Հիլթըն» պանդոկի պարտէզն ու նախասրահը, ուր համախմբուած էին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ասէրներ եւ համակիրներ՝ տօնախմբելու Նաւասարդեան 35րդ մարզախաղերու յաղթանակները, եւ անգամ մը եւս իրենց սէրն ու յարգանքը փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ին: Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ին, այն երիտասարդ կազմակերպութեան, որ իր ազգանպաստ պարտականութիւնը կատարելով՝ մաքուր միջավայր մը կը ստեղծէ հայ երիտասարդութեան, հայրենիքէ դուրս, հեռաւոր ափերու վրայ:

Մէկ ժամուան ընկերային ուրախ

ժամանցէ մը ետք, ժամը Տին, ներկաները առաջնորդուեցան գեղեցկօրէն զարդարուած սրահը եւ գրաւեցին իրենց տեղերը:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներով, զորս գեղեցկօրէն մեներգեց խոստմնալից երիտասարդ երգչուհի Լարա Ղարիպեան:

Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան երկրէն դուրս գտնուելով, գայն ներկայացուց Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներէն Վազգէն Քհնյ-Աթմաճեան: Սեղաններու օրհնութիւնը կատարելէ ետք, Վազգէն Քհնյ. փոխան-



Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ ճորձ Ա. Ժամկոչեան:

ցեց Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնները:

Ձեռնարկին կազմակերպիչ յանձնախումբին անունով ներկաները ողջունեց



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Խաչատուրեան եւ օրուան հանդիսավար Յարութ Սասունեան:



Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Սաչատուրեան: Ան երախտագիտութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի եւ ներկայի ղեկավարներուն, որոնք 35 տարիներ շարունակ, նուիրումով կազմակերպեցին շրջանի Նաւասարդեան մարզախաղերը: Եղբ. Բաֆֆի այս առիթով կոչ ուղղեց ներկաներուն՝ շարունակելու իրենց աջակցութիւնը, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը կարենայ իր հոգածութեան յանձնուած սերունդները հայօրէն դաստիարակել:

Ապա, օրուան հանդիսավարին՝ «Գալիֆորնիա Գուրիոր» շաբաթաթերթի հրատարակիչ եւ «Լինսի» հիմնարկի նախագահ Յարութ Սասունեանի բեղուն գործունէութեամբ լեցուն կենսագրական գիծերը ներկայացնելով, եղբ. Բաֆֆի բեմը յանձնեց անոր:

Յարութ Սասունեան առաջին հերթին, շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, որ զինք մասնակից կը դարձէ այս եզակի երեկոյին: Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի կարեւորութեան անդրադառնալով ըսաւ, որ ան պատմական գուգադիպութեամբ հիմնուած է 1918ին, Հայաստանի Ա. Հանրապետութեան ստեղծման տարին:

Ապա, 1976ին սկիզբ առած Նաւասարդեան մարզախաղերու իրագործման կարեւորութիւնը շեշտելով, այդ օրերու լրագրողի ու ակնատեսի իր վկայութիւնները տալով, Սասունեան յայտնեց, որ 1968ին շրջանին մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ-ի հզօրացման արդիւնքն են այսօրուան 17 մասնաճիւղերը՝ աւելի

քան 8000 անդամներով:

Շարունակելով, Սասունեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը, բացատրեց զայն իրականացնող մարզական եւ սկստական օգտաշատ ծրագիրները եւ կոչ ուղղեց ներկաներուն անպայման ներկայ գտնուելու Նաւասարդեան մարզախաղերու եզրափակիչ ձեռնարկներուն: Իր խօսքին աւարտին, հանդիսավար Սասունեան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը ներկայացնող Վազգէն Քհնյ. Աթմաճեան, Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ եղբ. Գօգօ Պալեան, ՀՕՄ-ի եւ Համազգայինի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Բ.Ը.Մ-ի հարաւային Գալիֆորնիոյ շրջանի ատենապետ Պերճ Շահպազեան, Ամերիկեան Սկստական Վարչութիւնի շրջանի խորհուրդի նախագահուհի Ռահյա Լինտսի, 43րդ շրջանի նահանգային խորհուրդի անդամի ներկայացուցիչ Քրիստին Ադախանեան, Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ, «տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ներ, հովանաւորներ եւ բազմաթիւ հիւրեր:

Այնուհետեւ տեղի ունեցաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքները, հետապնդած նպատակները եւ վերջին տարիներ

ընդ նուաճումները ներկայացնող տեսերիզի մը ցուցադրութիւնը, որ երկարաշունչ ծափողջոյններով գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օգտակար կը հանդիսանան Հ.Մ.Ը.Մ-ին, որ աւելի քան քառասուն տարիէ ի վեր կը ծառայէ գաղութի երիտասարդութեան:

«10 հազար պատանիներ օգտուած են Հ.Մ.Ը.Մ-ի ծրագրերներէն: Հ.Մ.Ը.Մ-ը կը սորվեցնէ, կ'առնչէ, կը ներշնչէ եւ կ'առաջնորդէ մեր երեխաները արդիւնաւէտ կեանքի՝ միաժամանակ անոնց մէջ շեշտելով ընտանիքը, համայնքը եւ մեր հարուստ աւանդութիւններն ու մշակոյթը: Մենք այս բոլորը կ'ընենք մեր համեստ ու նուիրեալ Հ.Մ.Ը.Մ-ական կամաւոր բանակին միջոցով, որ մեր կազմակերպութիւնը ամէն բանէ վեր կը դասէ: Անոնցմէ շատերը այսօր մեզի հետ են եւ կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր, համայնքներ, խումբեր եւ խմբաւորումներ: Անոնք կը ներկայացնեն այն ինչ որ օգտակար է Հ.Մ.Ը.Մ-ին: Անոնք մեր հերոսներն են», ըսաւ եղբ. Արթինեան:

Ապա, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի կարեւոր նուաճումներուն անդրադառնալով, եղբ. Արթինեան ներկաներու ուշադրութեան յանձնեց, թէ «Անցնող քանի մը տարիները պատմական եղան Հ.Մ.Ը.Մ-ի համար: Թէեւ մեր աշխատանքա-

յին ճամբորդութիւնը դիւրին չեղաւ, սակայն ան կարեւոր էր, եւ մենք մեր առաւելագոյնը տուինք, որովհետեւ կը հաւատանք, որ մեր դիմաց ունինք մարտահրաւէրներ, զորս յաղթահարելու համար մենք պէտք է մեր ձեռքերը սոթտած՝ աշխատինք եւ աշխատցնենք»:

Այս իմաստով, եղբայրը հպարտութեամբ ներկայացուց Շրջանային Վարչութեան ներկայ կազմը, Շրջանային յանձնախումբերու ներկայացուցիչները՝ չմոռնալով անցեալի Շրջանային եւ մասնաձեւերու վարչութիւնները եւ Հ.Մ.Ը.Մ-ին թիկունք կանգնող հայորդիներու աշխատանքը:

Հուսկ, Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութիւնները պարզելով, եղբայրը վստահեցուց, թէ՛ «Մենք անցեալէն սորված ենք, Մեր համայնքը զօրաւոր է, Մեր նպատակը ազնիւ է, Մեր կամքը հաստատուն է»:

Եղբ. Արթինեանի ոգեւորիչ պատգամէն ետք, տեսերիզի ցուցադրութեամբ ներկայացուցան «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2010» տիտղոսին արժանացած եղբ. Պերճ Ճամճեանի կենսագրական գիծերը, որմէ ետք եղբ. Արթինեան բեմ հրաւիրեց եղբ. Ճամճեանը եւ յիշեալ տիտղոսը յատկանշող յուշատախտակը յանձնեց անոր:

Մեծապէս զգացուած իրեն ընծայուած պատիւին համար, եղբ. Ճամճեան փոխանցեց իր սրտի խօսքը՝ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնելով Շրջանային Վարչութեան: Ան ըսաւ.

«Ինծի համար մեծ պատիւ է ըլլալ այն սակաւաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու ցանկին վրայ, որոնք այս տիտղոսին արժանացած են: Բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներն ալ, առանց վերապահութեան, օգտակար կը հանդիսանան հայ երիտասարդութեան: Մեր ակնկալութիւնն է, որ մեր երիտասարդութիւնը հաճելի ժամանց ունենայ, մասնակցի մարզական եւ սկառուտական գործունէութեանց եւ իր ապրած երկրին տիպար քաղաքացին հանդիսանայ: Տարիներու ընթացքին մենք բազմացանք, ցաւ ի սիրտ, եղան մեզմէ առ յաւելած բաժնուողներ, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը կը շարունակուի:

«...Իմ սիրտս սկառուտութեան, եւ յատկապէս մեր իրականացուցած երազանքին՝ Հ.Մ.Ը.Մ-ի նոր բանակավայրին մէջ է, որուն գոյութիւնը շարունակելու համար հսկայական աշխատանք ունինք կատարելիք, ի սէր մեր երիտասարդութեան եւ համայնքին, որուն համար ձեր զօրակցութիւնը կը խնդրենք»:

Այնուհետեւ, դարձեալ տեսերիզի միջոցով ներկայացուցեցաւ Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Ճորճ Ա. Ժամկոչեանը, այն տիպար հայր, որ հաւատարմով Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ հետապնդած նպատակներուն, սիրայօթար ստանձնեց պատուոյ նախագահի հպարտալի պարտականութիւնը:



Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան մարզախաղերու պատուոյ յիշատակութեան յուշատախտակը կը յանձնէ Ճորճ Ա. Ժամկոչեանին:

Յոտնկայս ծափողջոյններով բեմ առաջնորդուեցաւ Ճորճ Ա. Ժամկոչեան, որ յուզումնախառն ուրախութեամբ ուսին վրայ կրեց Նաւասարդեան մարզախաղերու մետալներով զարդարուած Եռագոյն երիզը:

Պատուոյ նախագահութիւնը յատկանշող Եռագոյն երիզի փոխանցման արարողութեան ընկերակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ՝ Հ.Մ.Ը.Մ.ականներ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններ:

Պաշտօնապէս իր պատասխանատու պարտականութիւնը ստանձնելէ ետք, Ճորճ Ա. Ժամկոչեան երախտագիտական իր խօսքը փոխանցեց ներկաներուն եւ ըսաւ. «Շատ զգացուած եմ այսօր, որովհետեւ կը նախագահեմ Հ.Մ.Ը.Մ-ի 35րդ Նաւասարդեան մարզախաղերուն: Ինծի համար մեծ պատիւ է այս տիտղոսը ստանալը: Այս առիթով կուզամ խորին շնորհակալութիւններս յայտնելու Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, որ ինծի վստահեցաւ այս պատուոյ նախագահութիւնը: Այս փորձառութիւնը յաւիտեան պիտի դրոշմուի յիշողութեանս մէջ: Յարգանք ու մեծարանք Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին»:

Յայտագրին վերջին բաժինով տեղի ունեցաւ Նաւասարդեան մարզախաղե-





րու 35ամեակը խորհրդանշող մոմավառութիւնը: Աւելի քան 35 Հ.Մ.-Ը.Մ.ասէրներ, մասնաճիւղեր եւ յարգելի ազգայիններ, իրենց սեղաններուն վրայ վառեցին հրամցուած գեղեցիկ մոմերը՝ յատկանշելով Նաւասարդեան մարգարիտներու 35 լուսաւոր տարիները, եւ արժանացան ներկաներու գնահատանքին:

Պաշտօնական յայտագրի աւարտին, ուրախ միջնորդողը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր: Ներկաները Նաւասարդեան յղթանակներու նոր չափանիշներ նուաճելու հաստատ համոզումով մեկնեցան տուն՝ Յուլիսի առաջին չորս օրերը Նաւասարդեան խանդավառութեամբ անցնելու հեռանկարով:

ՕՐՈՒԱՆ ՄՈՍՄԱՎԱՌՆԵՐԸ.-

- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն
- Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւն
- Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ



- Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի Ինլընտ էմփայրի «Արագ» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի Փոլթապոլի վեթերաններ
- Տէր եւ Տիկ. Արա ճէճէեան
- Տէր եւ Տիկ. Վահագն Թովմասեան
- Տէր եւ Տիկ. Միրո Խանգաղեան
- Տիկ. Ժասիկ Զառահեան
- Տէր եւ Տիկ. Արա Թովմասեան

- Տիար Գոգո Թովալեան
- Տէր եւ Տիկ. Արա Մարաշեան
- Տէր եւ Տիկ. Մհեր Դաւիթեան
- Տէր եւ Տիկ. Վիգէն Աբէլեան
- Տէր եւ Տիկ. Պերճ Պետոյեան
- Տոքթ. եւ Տիկ. Ժան Եփրեան
- Տէր եւ Տիկ. Օշին Յարութիւնեան
- Տէր եւ Տիկ. Զաքար Չորպանեան
- Տէր եւ Տիկ. Արամ Թովմաս
- Օրդ. Թալին Հինտոյեան
- Տէր եւ Տիկ. Անտի Անտոնեան
- Տէր եւ Տիկ. Ժան Գասպարեան
- Տէր եւ Տիկ. Մանուէլ Մարսէլեան
- Տոքթ. եւ Տիկ. Սարգիս Արեւեան
- Տէր եւ Տիկ. Յարութ Տոնոյեան
- Տիար Աբօ Սաղտեան
- Տէր եւ Տոքթ. Վաչէ Սողոմոնեան
- Տիար Արա Գալֆայեան
- Տէր եւ Տիկ. Կայծակ Զէյթլեան
- Տէր եւ Տիկ. Պերճ Քէօլեան
- Տէր եւ Տիկ. Ժիրայր Սարգիսեան
- Տէր եւ Տիկ. Շահէ Գիրոբեան

with the complements of

Restaurant Al-Mayass

ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՈՒՐԱԽ ՓԱՌԱՏՕՆԸ

Մարտ Բեռլինում
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Հինգլաբլիթի, 1 Յուլիս 2010ի յետմիջօրէին, Պրըմիենկհամ Հայ Աթուլի շրջափակէն ներս իր դռները բացաւ Նաւասարդեան 35րդ մարզախաղերու ուրախ փառատօնը: Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներուն մենբերգումով փառատօնին զեղարուեստական բաժնին բացումը կատարեց երգիչ Սահակ Սիւլեան: Ապա, ժողովրդային երգերով ելոյթ ունեցաւ երգիչ Հրաչ Պողարեան՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով փառատօնին շրջափակէն ներս:

Ոտքի էր Հ.Մ.Ը.Մ.ի ողջ ընտանիքը, որուն իւրաքանչիւր մասնաճիւղը իր պատրաստած համադրամ ճաշերով կը հիւրընկալէր հազարաւոր հանդիսականներ, որոնք մարզկային հեղեղի վերածած էին Պրըմիենկհամի տարածքը, հայկական շունչն ու ոգին սփռելով ամէնուրեք:

Նաւասարդեան յանձնախումբի եւ ենթալիանձնախումբի անդամ-անդամուհիները կազմ ու պատրաստ կը հիւրընկալէին Հ.Մ.Ը.Մ.ի համակիր հասարակութիւնը եւ կը հսկէին ընթացող ծրագիրներուն:



Հոն էին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, մարզախաղերու պատուոյ նախագահ Ճորճ Ա. Ժամկոչեան, նախկին պատուոյ նախագահներ եւ «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, մասնաճիւղերու վարչութիւններ: Հոն էին շրջանի քոյր կազմակերպութիւնները, որոնք եւս իրենց յատուկ քարոզչական կրպակները ունէին փառատօնին շրջափակէն ներս: Հոն էին շրջանի բազմազան առեւտրականները: Փոքրիկները ունէին իրենց խաղավայրն ու արուեստի անկիւնը: Ուրախ էր մթնոլորտը, Նաւասարդեան հարազատ ոգին կը տիրէր ներկաներուն մօտ:

Ուրախալի էր «Ասպարէզ»ի եւ «Հորիզոն»ի ներկայութիւնը, որոնք օրը-օրին Նաւասարդեանի լուրերը կը հաղորդէին հանրութեան:

Երգիչ Պողարեանի հրամցուցած զեղեցիկ երգերէն ետք, բեմը դարձեալ տրամադրուեցաւ Սահակ Սիւլեանին, որ ուրախ մթնոլորտ մը ստեղծեց ներկաներուն մօտ:

Այնուհետեւ, Նաւասարդեան հարազատ





տուհի եւ մարզիկ քոյր Նանօր Տէյրմէնճեանին: Մրցումները շարունակուեցան նաեւ Ուրբաթ, 2 Յուլիսին: Նոյն օրը, երեկոյեան, «Ռոզ եւ Ալէքս Փիլիպոս» Ազգ. վարժարանի մարզադաշտին վրայ սկիզբ առին վոլիպոլի մրցումները:

Այնուհետեւ մարզական մրցումները շարունակուեցան Պըր-

միւնտրտը իր գազաթնակէտին հասաւ երգիչ Գառնիկ Սարգիսեանի ժամանումով, որ ազգային-յեղափոխական իր երգերով եւ անոնց ընկերակցող հրավառութեամբ ստեղծեց ոգեշունչ միւնտրտ:

Փառատօնին ուրախ միւնտրտին զուգահեռ, նոյն վարժարանի պասքեթպոլի երեք մարզադաշտերուն վրայ տեղի ունեցան պասքեթպոլի զանազան դասակարգերու մրցումները, որոնք սկիզբ առած էին օր մը առաջ՝ Զորեքշաբթի, 30 Յունիսին:

Հինգշաբթի, Յուլիս 1ին, նոյն վարժարանի մարզադաշտերուն վրայ սկիզբ առին թենիսի մրցումները, որոնց պատասխանատուութիւնը վստահուեցաւ Շրջանային փոխ խմբապե-

մինկհամ Հայ Սքուլի, Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի, «Փէսիֆիք Գոմունիտունիթի Սենթրը»ի եւ «Ռոզ եւ Ալէքս Փիլիպոս» Ազգ. վարժարանի մարզադաշտերուն վրայ:

Պըրմինկհամ Հայ Սքուլի շրջափակէն ներս կատարուեցան նաեւ փինկ-փոնկի, ճատրակի եւ Ֆութպոլի բոլոր դասակարգերու մրցումները:

Նաւասարդեան յաղթանակները յատկանշող չորսօրեայ աշխատանքները փակման յատուկ հանդիսութեամբ եզրափակուեցան Կիրակի, 4 Յուլիս 2010ին, Պըրմինկհամ Հայ Սքուլի Ֆութպոլի մարզադաշտին վրայ կատարուած յաղթական տողանցքով:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg. Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ 2010-Ն ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ



Միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը տեղի ունեցան 1-4 Յուլիս 2010, ծիլ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան մարզիկ-մարզիկուհիներու դասակարգերով: Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ խանդավառութեամբ կը շրջէին դաշտէ դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդրադառնալու թէ Հ.Մ.Ը.Մ.ին իրենց անդամակցութիւնը ինքնին ամենամեծ յաղթանակն է ազգային դիմագիծի պահպանման իրենց ճիգերուն մէջ:

Բացման հանդիսութեան ներկայ էին օրուան պատուոյ հիւրերը՝ Օշական Արք. Չորոյեան, Նիւ ձըրզիի հոգեւոր հովիւ Յովնան Պողոյեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժան Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Եղբ. Պետրոս Տէր Վարդանեան եւ հոծ բազմութիւն մը:

Կիրակի, Յուլիս 4ի երեկոյեան, պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի ու ներկայութեամբ բազմաթիւ հրաւիրեալներու եւ աւելի քան 700 հայորդիներու: Բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ ձըրզիի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վարուժան Վարդանեան: Ան ըսաւ, որ

Թղթակից ՆԻՒ ԵԸՐՁԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու 20րդ միջ-մասնաճիւղային մարզախաղերը, Յուլիսի առաջին շաբաթավերջին, տեղի ունեցան Նիւ ձըրզիի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ավայել միջնորդի մէջ կատարուած այս մրցումները մեծ խանդավառութիւն ստեղծեցին: Հոծ բազմութիւն մը չորս օր շարունակ հետեւեցաւ Ֆուտպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, լուրարշաւի, վազբի, թենիսի եւ փինկ-փոն-

կի հետաքրքրական մրցումներուն: Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 10 մասնաճիւղերէն աւելի քան 600 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք ժամանած էին Պոսթընէն, Շիքագոյէն, Նիւ Եորքէն, Նիւ ձըրզիէն, Ֆիլատելֆիայէն, Ֆլորիտայէն, Ուաշինկթընէն, Փրովիտընսէն, Տիթթոյթէն, Ալպընիէն եւ Թորոնթոյէն: Մարզիկները իջեւանեցան Նիւ ձըրզիի «Հոլիտէյ ինն» պանդոկը եւ հիւրընկալուեցան Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին կողմէ, որ այս առիթով ճիգ չէր խնայած մարզական եւ ընկերային լաւագոյն միջնորդող ստեղծելու:



տարագիր հայ ժողովուրդին հետ, Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ ամէնուրեք եւ սերունդներու ազգային գիտակցութեան ու հայեցի դաստիարակութեան ի խնդիր ոչինչ խնայեց եւ ո՛չ մէկ ճիգ զլացաւ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ Եղբ. Պետրոս Տէր Վարդանեան խօսք առնելով յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ իր երթը, մերթ լայնատարած, ողորկ մայրուղիներէ, մերթ նեղլիկ ու բարակ արահետներէ, սակայն միշտ ինքնավստահ կամքով եւ անխորտակ բերկրանքով:

Ապա, եղբ. Վարդանեան վկայակո-

չեց Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեանի մէկ խօսքը, թէ՛ «Հ.Մ.Ը.Մ. մեր կեանքին մէջ սովորական հասկացողութեամբ կազմակերպութիւն մը չէ: Նոյնիսկ ամէնէն դժուար ու դժուար օրեօրու, Հ.Մ.Ը.Մ.ը ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի տեսիլքը վառ պահելով պարեցաւ, գործեց ու ծառայեց: Հայաստանէն հեռու, տարիներ շարունակ, Հ.Մ.Ը.Մ. Եռագոյն դրօշը միշտ բարձր պահեց, նաեւ բարձր ու վեհ պահելով Հայաստանը: Բան մը, որուն համար Հայաստանն ու Սփիւռքը պէտք է երախտապարտ ըլլան այս միութեան: Մեր բարոյական արժէքներու առաք-

եան է Հ.Մ.Ը.Մ.ը: Հայ դպրոցի կողքին՝ հայեցի դաստիարակութեան ջատագովն է այս միութիւնը: Աւելին, մեր ազգային պահանջատիրութեան յառաջապահ գինուորն է Հ.Մ.Ը.Մ.ը»:

Շարունակելով, եղբ. Վարդանեան հաստատեց. «Կառչած իր նշանաբանին, Հ.Մ.Ը.Մ. դաստիարակեց ու սորվեցուց ազնուագոյնը, գործեց եւ միշտ պիտի գործէ անհամար ու անհաշիւ սերմանելու եւ բաշխելու ըմբռնումով ու հասկացողութեամբ: Ահա այս է նաեւ այն գաղտնիքներէն մէկը, որուն շնորհիւ այս միութիւնը կը մնայ միշտ հզօր, գործունեայ ու երիտասարդ...»:

Խօսք առաւ Հ.Յ.Դ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժան Աւետիսեան: Ան 92 տարի առաջ գաղափարապաշտ հայրերին որու կողմէ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի իրագործած յաջողութիւնները բնորոշելով յայտնեց, որ անդամներու անսակարկ նուիրումին ու մեր ժողովուրդի աջակցութեան շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ դաստիարակել հայ երիտասարդը, որպէսզի ան տէր կանգնի մեր ազգային իրաւունքներուն եւ լծուի Հայ Դատի արդար պայքարի հետապնդման աշխատանքներուն:

Ան յայտնեց, թէ անփոփոխ պիտի մնայ յանձնառութեան ուժը: «Կառչած իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պիտի շարունակէ սերունդներ պատրաստել եւ դաստիարակել, այդ ալ շնորհիւ ժողովուրդին՝ համակիրներուն տաժած գուրգուրանքին եւ հետեւողական ու աննահանջ քաջալերանքին»:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան իր պատգամին մէջ յայտնեց, թէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հայ ազգային պահանջատիրութեան յառաջապահ գինուորն է: Ան դիտել տուաւ, որ այս միութիւնը եղաւ ու գործեց ամէն տեղ, տարբեր մարզերու մէջ եւ զանազան մակարդակներու վրայ՝ տիրանալով հայ ժողովուրդի սիրտին ու յարգանքին, որոնք ձեռք բերեցան հին ու նոր նուիրեալ միութենականներու շնորհիւ:

«Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան կեանքին մէջ վերածուեցաւ նուիրումի, հաւատ-

քի, արժեքներու ու տեսիլքի անսպառ աղբիւրի, հայապահպանման եւ ազգային ինքնութեան գոյատեւման կռուանի: Հ.Մ.Ը.Մ.ն է որ, իր հիմնադրութենէն ի վեր, յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարգիկն ու սկառուտը», ըսաւ ան, նշելով թէ սրընթաց թափով յեղաշրջուող նոր ժամանակներուն հետ ընթանալով, Հ.Մ.Ը.Մ.ականէն կը պահանջուի յաւելեալ գոհողութիւն եւ նուիրում: Ան աւելցուց, թէ Հ.Մ.Ը.Մ. եղաւ տնակը՝ պանդուխտ հայորդին: «... Պատի՛ւ այդ նշանաբանին... յարգա՛նք այդ պանծալի դրօշին... եւ հսկայ նուիրման տորմիդ հրաթեւ, կամաւոր բանակ: Հ.Մ.Ը.Մ.ը մեր կեանքին մէջ... ի՛նչ գեղեցիկ եւ մեր կեանքը գեղեցկացնող տեսարան է այս, ի՛նչ գօտեպնդիչ ու մեր կեանքը գօտեպնդող երեւոյթ...», ըսաւ եղբ. Դանիէլեան:

Վերջին խօսք առնողը եղաւ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ՝ Օշական Արք. Չորոյեան: Ան իր խրախուսիչ պատգամով գովքը հիւսեց ՅՁ տարեկան երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ին, շեշտելով որ ան հայ երիտասարդին կու տայ հայու ինքնութիւն, հաւատարմութիւն մեր ազգային արժեքներուն: Հ.Մ.Ը.Մ. փոքր տարիքէն անոր կը սորվեցնէ կարգ ու կանոն, յարգանք օրէնքի նկատմամբ: Սրբազան Հայրը աւելցուց, թէ մեր պարտականութիւնն է յաջորդ տասնամեակներուն պայքարիլ անտարբերութեան դէմ, տէր կանգնիլ մեր ազգային ամբողջական իրաւունքներուն, օժանդակել Հ.Մ.Ը.Մ.ին ամէն ձեւով, մանաւանդ պահելով մեր գաւակները անոր խրոխտ շարքերուն մէջ, որպէսզի անոնք դառնան արժանաւոր պաշտպանները մեր կրօնքին, մշակոյթին ու հայրենիքին: Սրբազան Հայրը իր խրախուսիչ պատգամով օրուան խանդավառութիւնը հասցուց իր գագաթնակէտին: Հուսկ, իր օրհնութեան խօսքն ու պատգամը աւարտելով, Առաջնորդը իր անհուն ուրախութիւնն ու հպարտութիւնը յայտնեց՝ ի տես պարզուած պատկերին, որուն ընդմէջէն Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան համար հպարտութեան ներշնչարան կը հանդիսանայ, ըսաւ ան:



Փակման հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում մարզախաղերու մասնակից բոլոր մասնաճիւղերուն: «Տիգրան Ա. Քհնյ. Խոյեան»ի շրջուն բաժակը շնորհուեցաւ Պոսթընի մասնաճիւղին, որ առաջինը հանդիսացաւ բոլոր մարզախաղերու մէջ առաւելագոյն կէտեր հաւաքած ըլլալուն համար: Մարզական բարձր ոգի ցուցաբերող Ֆիլատելֆիոյ մասնաճիւղը իր կարգին ստացաւ յատուկ բաժակ մը: «Արա Մարկոսեան» շրջուն բաժակը շնորհուեցաւ Ալպընի մասնաճիւղին, ամէնէն տիպար եւ լաւ կազմակերպուած մաս-

նաճիւղը ըլլալուն համար: Հանդիսավար եղբ. Վարուժ Վարդանեան շնորհակալական խօսքերէ ետք յայտարարեց, որ Յուլիս 2011ին, Արեւելեան շրջանի Ձեռք միջ-մասնաճիւղային մարզախաղերը տեղի պիտի ունենան Պոսթընի (Մասաչուսեց) մէջ:

Սրբազան Հօր աղօթքէն ետք, սկառուները տողանցեցին հպարտօրէն:



ԵՂԲ. ՎԻԳԻՆ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՐՇԱԽԻ ՄՐՑՈՒՄ

Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին կազմակերպութեամբ, Կիրակի, 1 Օգոստոս 2010ին տեղի ունեցաւ հեծելարշաւի մրցում մը, ի յիշատակ Արցախի ազատագրական պայքարին ընթացքին նահատակուած ՀՄԸՄ-ական մարզիկ եղբ. Վիգին Զաքարեանի: Մրցումին իրենց մասնակցութիւնը բերին նահատակ եղբոր հեծելարշաւի ընկերները: Սկզբունքով, մրցումը նախատեսուած էր հեծելարշաւի լիբանանեան զանազան ակումբներուն միջեւ, սակայն ապահովական պատճառներով, վերջին պահուն ան առկախւեցաւ լիբանանեան ներքին ապահովութեան ուժերուն կողմէ:



Այնուամենայնիւ, ՀՄԸՄ-ական խումբ մը մարզիկներու փափաքին ընդառաջելով, Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց փորձ մրցում մը՝ ՀՄԸՄ-ական մարզիկներով:

Մրցումը սկիզբ առաւ նահատակ ազատամարտիկին ընկարանին առջեւէն, Պուրճ Համուտի Թրատ Թաղամասէն: Մեկնարկին ազդանշանը տրուեցաւ ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանի կողմէ: Շրջանային Վարչութեան կողքին ներկայ էին Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին մօտ ՀՄԸՄ-ի ներկայացուցիչները, նահատակ ազատամարտիկին ընտանեկան պարագաները, Հ.Յ.Դ. «Նիկոլ Դուման» կոմիտէի ներկայացուցիչները, ԼԵՄ-ի «Դրօշակ» մասնաճիւղի անդամները, ինչպէս նաեւ ազգայիններ:

Մրցումը կատարուեցաւ Պուրճ Համուտէն մինչեւ Տրպպայա եւ աւարտեցաւ «Մարինա»-ի մուտքին: Մրցումին աւարտին, բաժակատուցութիւնը տեղի



PhotoRaffi



ունեցաւ «Նիկոլ Դոման» ակումբի «Վիզէն Զաքարեան» սրահին մէջ, կէսօրէ առաջ ժամը 11.30ին:

Բաժակատուէութեան առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շըր-Ղանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Քէչիշեան: Եղբայրը յայտնեց, որ «Մենք պարտաւոր ենք մեզմէ անվերադարձ բաժնուողներուն յարգանքի տուրք տալու: Կրկնակի եւս պարտաւոր ենք, ու պարտական միաժամանակ, յիշատակը վառ պահելու բոլոր անոնց, որոնք իրենց կեանքին գնով կենդանի օրինակ դարձած են դադափարի, գոհաբերութեան եւ հայրենասիրութեան»:

Ապա, Վիզէն Զաքարեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր նահատակներու յիշատակը ոգեկոչելով, եղբ. Քէչիշեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ դպրոց, ակումբ եւ երկրորդ տուն բոլոր անոնց, որոնք իրենց գոհաբերութեամբ ու նուիրումով օգտակար դարձան ազգին, միութեան, հայրենիքին, եւ քրտինքով, ջանքով ու յոգնութեամբ կերտեցին միութեան փառքն ու պատիւը:

«Հ.Մ.Ը.Մ.ականը չի կրնար եւ իրաւունք չունի մոռնալու

այս բոլորը: Անցեալին կը նայինք տեսնելու համար ապագան»:

Բաժակատուէութեան պահուն, բաժակներ յանձնեցին Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները եւ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարչաւի նախկին խումբերու անդամ վեթերան եղբայրներ՝ հետեւեալ ձեւով. Գարէն Օհանեան (խումբի խմբապետ) բաժակը ստացաւ եղբ. Նազօ Հապիպեանէն, Կարօ Քէչիշեան չորրորդ՝ եղբ. Հայկ Թապազեանէն, Սիմոն Փանոսեան երրորդ՝ եղբ. Վարդգէս Մատուրեանէն, Յովիկ Քիւրտեան երկրորդ՝ եղբ. Ազատ Գալաթեանէն, Ռազմիկ Քիւրքճեան առաջին՝ եղբ. Վաչէ Մատուրեանէն, Ժազ Մահտեսեան՝ ընտանեկան պարագաներէն, ծընողքը՝ եղբ. Յակոբ Քէչիշեանէն եւ «Նիկոլ Դոման» կոմիտէն՝ եղբ. Յակոբ Քէչիշեանէն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՇԽԷՆ ՓԻԼԱԴԵԱՆԻՆ

Թղթակից
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Չորեքշաբթի, 26 Մայիսի երեկոյեան Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց միութեան բարերարուհի Աշխէն Փիլաւճեանին: Պատուիրակութիւնը գլխաւորեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գօգօ Պալեան եւ Վահրամ Դանիէլեան: Անոնց ընկերացան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շըր-Ղանային Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Սթիւ Արթինեան, Խաչիկ Խալաթեան, քոյրեր Անօ Մանսուրեան, Մարօ Քէչիշեան, Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահ ճորճ Ժամկոչեան եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2010» տիտղոսին արժանացած եղբ. Պերճ ճամճեան:

Այցելութեան ներկայ գտնուեցան բարերարուհիին Հ.Մ.Ը.Մ.ական զաւակները՝ Վահրիճը, որ վերջերս Ազգային Վարչութեան անդամ ընտրուած է եւ Բեզլարը, կնոջ՝ Վերային հետ:

Այցելութեան ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքները եւ յաջողութիւնները, որոնց մէջ իր մեծ ներդրումը բերած է

Աշխէն Փիլաւճեան: Քրոջ յարատեւ օգտակարութիւններուն իբրեւ երախտագիտութիւն, Շըջանային Վարչութիւնը տարեկան այցելութեամբ մը իր շնորհակալութիւնը կը յայտնէ անոր:

Քոյր Փիլաւճեան ծանօթանալով Նաւասարդեան 35րդ մարզախաղերու պատուոյ նախագահին եւ տարուան «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ին, շնորհաւորեց զանոնք եւ յաջողութիւն մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի ի նպաստ իրենց աշխատանքներուն:

«Հ.Մ.Ը.Մ.ը միշտ ալ եղած է եւ կը մնայ սրտիս մօտիկ կազմակերպութիւն, որուն նպատակներուն եւ այդ ուղղութեամբ տարուող աշխատանքներուն հաւատք ընծայած եմ: Ես միշտ պատրաստ եմ օգտակար հանդիսանալու այս մեծ կազմակերպութեան, որ մեր երիտասարդութիւնը կը համախմբէ», ընդգծեց Աշխէն Փիլաւճեան եւ այս տարի եւս իր նուիրատուութիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ին:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը իր շնորհակալութիւնները յայտնեց քոյր Փիլաւճեանին եւ Նաւասարդեան ձեռնարկներուն հրաւիրելէ ետք զինք՝ հրաժեշտ տուաւ առաւել գօտեպնդուած շարունակելու միութեանկան իր պարտականութիւնները:

ՊԱՏԱՆԻ ԵՂԲ. ՄՈՒՐԱՏ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՄՆԺԱՄԱՆԱԿ ՈՒ ԿՍԿԾԱԼԻ ԿՈՐՈՒՄՏԸ



Մուրատ Մուրատեանի (ձախին) վերջին լուսանկարը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Մուրիոյ 2010ի Մայիսեան տողանցքին:



Մուրատ Մուրատեան իր հօր՝ եղբ. Սեպուհ Մուրատեանի հետ:

գործողութեան սենեակ, առանց գիտնալու որ ա՛լ երբեք պիտի չվերադառնայ ան: Ան չգիտցաւ, որ անգուժ զոհը պիտի ըլլար բժշկական անհասկնալի ու աններելի սխալի մը:

Մուրատիկի հարազատները, որոնք քանի մը օր առաջ զինք շնորհաւորած էին իր 14րդ տարեդարձին առիթով, խուռներամ շարքերով ներկայ գտնուեցան անոր յուղարկաւորութեան, որ տեղի ունեցաւ 23 Յուլիսին, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Մուրատ Մուրատեան ծնած է Հալէպ, 1996 թուականին: Նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանը եւ եղած է անոր աշխատասէր ու տիպար աշակերտներէն: Ապա, ան իր ուսումը շարունակած է Ազգ. Քառէն Եփփէ Ճեմարանին մէջ, ուր դարձեալ ուշադրութեան արժանացած է դպրոցի ուսուցչական կազմին կողմէ: Մուրատիկ քաջալերուելով իր մեծ հօր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վար-

Րաֆֆի Սիւլահեան ՉԱԼԵՊ

Կեանքի օրէնքով մարդ արարածին տրուած է կորստեան տխրութիւնը, սակայն նոյն տխրութեան հետ տրուած է նաեւ համոզում մը, որ մահը մարմնապէս միայն մեզմէ կը հեռացնէ մեր հարազատը, բարեկամը, եղբայրը կամ ընկերը, մինչ անոր հոգին միշտ կը մնայ մեզի հետ, անոր յիշատակը կը մնայ մեր մտապատկերին մէջ, անոր խօսքերն ու գործերը փորագրուած կը մնան մեր սրտերուն մէջ:

Հինգշաբթի, 22 Յուլիս 2010 թուականը անհատալի տխուր իրականութեան մը առջեւ դրաւ հալէպահայութիւնը, եւ ինչու չէ Սուրիոյ սահմաններէն դուրս գտնուող Մուրատեան ընտանիքի բոլոր հարազատները, բարեկամներն ու ազգականները, երբ անոնք գոյժը առին իրենց պատանի գաւակին՝ Մուրատ Մուրատեանի անակնկալ մահուան:

Պատանի Մուրատիկը, ինչպէս կը կանչէին զինք ընտանիքի անդամներն ու ընկերները, այդ օր կէսօրէ ետք մուտք գործեց Հալէպի հիւանդանոցներէն մէկը, կուրաղիքի սովորական գործողութեան մը ենթարկուելու համար: Մուրատիկ իր ուժեղ կամքով ու հաւատքով, բժիշկին ընկերակցութեամբ եւ ծնողքին ու հարազատներուն աղօթքներով, ուղղուեցաւ



չուլթեան նախկին անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի միութենական նուիրեալ կեանքի օրինակէն, չորս տարեկանին Հ.Մ.Ը.Մ-ի սկսուտական շարքերուն կ'անդամակցի իբրեւ գալլիկ: Վեց տարեկանին ան իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի տարեկան բանակումին եւ կ'ըլլայ կրտսերագոյն մասնակիցը: Ապա, շարունակելով իր սկսուտական կեանքը, ան կը փոխանցուի «Շաւարշ Քրիսեան» Արիական միաւոր, ուր Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90ամեակի տօնակատարութեան ընթացքին կը ստանայ սկսուտական «Նորընծայ» կարգի վկայական: Մուրատիկ, հետեւելով իր հօր՝ Հ.Մ.Ը.Մ-ի վարչական եւ ֆուլթայլի խումբի նախկին խմբապետ եղբ. Սեպուհ Մուրատեանի մարզական ուղիին, կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթայլի կրտսերներու խումբին: Կը հետեւի նաեւ թենիսի փորձերու եւ իր մասնակցութիւնը կը բերէ Սուրիոյ մակարդակի կարգ մը մրցաշարքներու եւ կ'արձանագրէ տպաւորիչ արդիւնքներ: Շրջան մը ան մաս կը կազմէ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի բարաթէի խումբին:

2006 թուականին, ազգին ու հայրենիքին հանդէպ ունեցած հաւատքը Մուրատիկը կը մղէ անդամակցելու Պատանեկան Միութեան շարքեր, դառնալով անոր նուիրեալ անդամներէն մէկը:



Սիրելի՛ Մուրատիկ, եղար համեստ, ծառայասէր, ընկերաշին, խանդավառ ու անսպառ եռանդով պատանի մը, բայց դժբախտ ճակատագիրը քեզ մարմնապէս հեռացուց մեզմէ: Այսօր դուն անդարձ բաժնուած ես մեզմէ, բայց յիշատակդ պիտի մնայ անթաւամ: Երկար տարիներ դուն պիտի մնաս մեր հոգիներուն մէջ:

Երթդ բարի, եղբայր Մուրատիկ:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

ՍԵԼԱՆԱՅ ԼԻՃԸ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Սեւանայ լիճը, որ կը կոչուի նաեւ Գեղամայ ծով, Հայաստանի Հանրապետութեան մեծագոյն լիճն է: Ան կը գտնուի Գեղարքունիքի մարզին մէջ եւ շրջապատուած է Գեղամայ, Արեգունիի, Սեւանի ու Վարդենիսի լեռնաշղթաներով:

Սեւանայ լիճին ջուրը անոյշ է: Անոր մէջ կը թափին 28 գետակներ, իսկ իրմէ կը բխի միայն մէկ գետ՝ Հրազդան կամ Զանգու:



Լիճին տարածութիւնն է 1370 քառ. քմ., ամէնէն խորունկ տեղը 90 մեթր է, իսկ ծովու մակերեսէն բարձրութիւնը՝ 1916 մեթր: Իր բարձրութեամբ առաջ-



նակարգ լիճ է: Անոր մէջ կը գտնուին ընտիր ձուկեր, ինչպէս՝ իշխանածուկ, Կարմրախայտ, Գեղարքունի եւ Կողակ:

Լիճին հիւսիս-արեւմտեան կողմը, 110 մեթր բարձրութեամբ եւ 3 քմ. շրջապատով կղզեակ մը կայ, որ կը կոչուի Սեւանայ կղզի: Կղզիին վրայ կը բարձրանայ Սեւանայ վանքը, որ ունի երեք եկե-

ղեցի: Անցեալ դարու կէսերուն, լիճին ջուրերը պակսեցան, ելեկտրական ուժի արտադրութեան եւ ոռոգման համար գործածուելուն պատճառով: 1953ին կղզին վերածուեցաւ թերակղզիի:

Սեւան անունը յառաջ եկած է ուրարտական «Սուինիա» կամ «Մուինիա» անունան ձեւափոխութեանէն, որ կը նշանակէ լիճ կամ աւազան:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԿՐԾՔԱԴԷՏ

Կրծքադէտը բարդ բառ մըն է (Stethoscope), որ ծագում առած է յունական երկու բառէ՝ կուրծք եւ լսել:

Կրծքադէտը բժշկական գործիք մըն է, որ բժիշկին կ'օգնէ լսելու հիւանդին սրտի զարկերը:

Կրծքադէտը ստեղծուած է Ֆրանսացի բժիշկի մը կողմէ, 1815 թուականին: Առաջին կրծքադէտը շինուած է տախտակէ:

Կրծքադէտը գործիք մըն է, որ կարելի կը դարձնէ սրտի զարկերուն եւ շնչառութեան ունկնդրութիւնը: Ան կ'ընդունի մարմնին թրթռացումները, զանոնք կը վերածէ ձայնի եւ երկու ճկուն խողովակներու միջոցով կը հասցնէ բժիշկին ականջին:



ԱՆՅԱԿԱՏԱԼԻ, ԲԱՅՅ ԻՐԱԷ



● Ամենէն երկար կեանք ունեցող կենդանին կրիան է. ան կրնայ ապրիլ մինչեւ 100 տարեկան:

● Կատուները ամենէն ճկուն կենդանիներն են. անոնք կրնան բարեփոխել իրենց մարմինն ձեւը, որպէսզի երբ բարձունքէ մը իյնան՝ չը վնասուին:

Բախտաւոր կատու մը 42 անգամ ինկած է եւ... վերապրած:

● Մեր ծորակէն կաթած ջուրը, որ վայրկեանը մէկ կաթիլ կը կաթի եւ գայն նոյնիսկ նկատի չենք առներ, եթէ ջուրի տակառներու մէջ հաւաքենք, տարեկան մօտաւորապէս 38 տակառ ջուր կրնանք հաւաքել: Երեւակայեցէք, եթէ աշխարհի մէջ ամէն տուն այսպէս ջուր հաւաքէ՝ որքան ջուր խնայուած կ'ըլլայ:



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԿԻՒՌՆԵՐԸ

Աշխարհի չորս կողմը կարելի է գտնել 200 տեսակ սկիւռներ: Անոնք ընդհանրապէս կ'ապրին տաք երկիրներու մէջ:

Ամենէն փոքր սկիւռը միայն 13 սանթիմետր է, քիթէն պոչը եթէ չափենք: Իսկ ամենէն մեծ սկիւռը կրնայ հասնիլ մինչեւ 1 մետրի:

Սկիւռները ստնաւոր կենդանիներ են: Կ'ունենան միայն չորս ակուս, երկար պոչ մը, որմով կը ծածկուին երբ կը քնանան: Երկար պոչը կ'օգնէ իրենց հաւասարակշռութիւն պահելու համար: Սկիւռները կ'ապրին 4-5 տարի: Ընդհանրապէս ձմեռը մոխրագոյն կ'ըլլան, իսկ ամառը՝ կարմիր:



Սկիւռներ կան, որոնք ծառերու վրայ կ'ապրին: Անոնք կը սիրեն ցատկուտել ծառէ ծառ եւ մագլցիլ ձիւղէ ձիւղ: Ուրիշներ գետնի սկիւռներ են. անոնք անցքերու մէջ եւ հողերու վրայ կ'ապրին եւ յաճախ կը պահուրտին: Անոնք ձմեռը կ'անցընեն քնանալով:

Սկիւռները ընդհանրապէս, ընկոյզ, կաղին, խոտ, բոյսեր եւ փոքր միջատներ կ'ուտեն: Մեծ կենդանիները ընդհանրապէս կը սիրեն սկիւռ ուտել, այդ պատճառով ալ անոնք խուճերով կ'ապրին, իրարու մօտ կը մնան եւ սուլելով իրարու լուր կու տան՝ երբ վտանգ զգան:

Էգ սկիւռները երկուքէն ութը պզտիկ սկիւռներու ծնունդ կու տան: Պզտիկ սկիւռները կոյր կը ծնին եւ իրենց մօրմէ կախնալ կ'ըլլան 2-3 ամիս:

Սկիւռները շատ արագ կը վազեն եւ երկար տարածութեան վրայ կը ցատկեն: Գետնի սկիւռները շատ արագ կը փորեն փոսիկներ եւ գետնին տակ կը շինեն անցքեր, ուր կը պահուրտին: Անոնք նաեւ իրենց աւելորդ կաղինները փոսիկներու մէջ կը պահեն եւ երբ անօթեան կ'երթան կը փնտուեն իրենց պահած ուտելիքները:

Սկիւռները ընկերային անասուններ են: Անոնք մարդոց կը մօտենան, որպէսզի մարդիկը կերակրեն զիրենք:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Թերթ ունի, բայց

ծաղիկ չէ:

Կարուած է, բայց

չապիկ չէ:

Բերան չունի, բայց կը պատմէ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր ոզնի):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

1			8		4			9
		8				1		
5	9			6			2	3
	6		4				7	
		7	6	8	5	4		
	1				3		6	
9	8			4			1	7
		1				6		
6			3		1			5

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

4	2	6	3	5	7	9	1	8
5	3	8	9	1	6	2	7	4
1	9	7	8	4	2	6	3	5
6	5	3	7	8	9	4	2	1
9	8	1	4	2	5	3	6	7
2	7	4	6	3	1	8	5	9
7	6	5	2	9	4	1	8	3
8	1	9	5	6	3	7	4	2
3	4	2	1	7	8	5	9	6

Պատասխանը՝ յաջորդիւ


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Ֆորմիլա 1»ի 1950ի աշխարհի ախոյեան իտալացի մրցավարորդը:
- Մթնոլորտային գոլորչի - Սանտրել - Ուսի կենդանի - Առարկայ:
- Արջակատու - Ռուսերէն այո՛ - Այբուբենէն - Գրաբար՝ հո՛ս:
- Իգական օտար անուն - Հիւրընկալ:
- Նոյ՝ օտարացած - Սուրբիական լրատու գործակալութիւն - Մոխիր (հակ.):
- Կրկնուած գիրեր - Ճիճեղ - Այբուբենէն:
- Անձնական դերանուն - Խիզախ:
- Օղի խառնակութիւն - Իտալական գետ - Օտար սրբուհի:
- Արական օտար անունի - Կալսող եզ:
- Եռանդուն - Արքունիք:
- Պտղատու ծառատեսակ:
- Մայթ - Ճամբայ:
- Ցուցական դերանուն- Ցուցական ածական:
- Փոթորիկ, ուրական - Յարացոյց:
- Տառի մը անունը - Փայտղիլ:
- Անթարթ - Լեզուով մը այո՛ - Այբուբենէն:
- Խիտ - Լպրծուն - 7700:
- Անգօր - Անուշահոտ փոքր սեխ - Լակ:
- Իգական անուն - Աբրահամի եւ Սառայի որդին:
- Հին ձեւով՝ իգական «նա» - Կողոփոց - Մարտունիի գիւղերէն:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Ասիական երկիր - Թոնիրի ակը փակելու խցան - Պատասպարան:
- Հասկցի՛ր - Հայրենի երգիծաթերթ - Խումբ - Փոխադրէ՛:
- Սեւ ու կարծր փայտ - Անգլիացի ֆութբոլիստ:
- Իրերայաջորդ գիրեր - Կրկնուած բաղաձայններ - Ճերմակ շինանիւթ - Օղի ծակ:
- Գիտակցիմ՝ Թաղիք - Ձեռքերու վրայ կարծր այտոյց - Կրկնուած բաղաձայններ:
- Լծկան կենդանի - Իւրացո՛ւր - Ափրիկեան ոստան - Կարմիրի զարնող դեղին (գոյն):
- Ձէթը հանուած կանեփի հատիկ - Օգնական - Ցուցական ածական - Ցուցական ածական:
- Աւերակ - Հսկողութիւն - Տարուան բաժանումներէն:
- Յեղակարծ - Ցորենի հասուն գլուխ:
- «Ֆորմիլա 1»ի սպանացի մրցավարորդ - Հաշուեգիրք:
- Բիծ - Տարածքի միաւոր - Քուղ - Պտղատեսակ:
- Տառի մը անունը - Ամերիկացի թենիսմէն - Լծորդութիւն - Հետք:
- «Գեղեցիկ» որակուած հայ նահապետ - Պարանոց - Տապանաբնակ նահապետը - Միամանթոյի ծննդավայրը:
- Ֆրանսական քաղաք - Իրկից գիրեր - Պարտիզայանի գործիք - Խանդ:
- Հայ աշխարհակալ թագաւոր - Կրկնուած բաղաձայններ - Ամերիկեան երկիր:



ԹԻՒ 185 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒԹՈՒՄ

1	Ս	Ե	Ր	Ե	Ն	Ա	Ո	Ի	Ի	Լ	Ի	Ղ	Մ	Ջ
2	Ա	Ր	Ե	Ի	Ե	Լ	Ք	Ծ	Ո	Ն				
3	Կ	Ա	Ն	Ա	Ն	Ի	Ն	Ո	Ի	Ի	Կ			
4	Ա	Ն	Ա		Գ	Ծ	Կ	Ո	Ի	Ր	Ե			
5	Ռ	Ի	Կ	Ա		Ա	Ռ	Ա	Կ		Ե	Ր		
6		Կ	Ա	Ր	Ի	Ն	Է			Մ	Ա	Լ	Ն	
7	Մ		Ն	Ե	Ր	Ջ				Ա	Կ	Ր	Ա	Տ
8	Ա	Հ		Կ	Ա	Պ				Կ	Տ	Ի	Ր	
9	Հ	Ա	Մ	Ա	Տ	Ա	Ն			Ի	Կ		Հ	
10	Ո	Ր		Ն	Ե	Ղ	Ո	Ս		Փ	Օ	Լ		Լ
11	Գ	Ա	Ջ		Ս	Տ	Է	Պ		Օ	Ր		Մ	Ա
12	Ե	Կ	Ա	Ն		Ա	Լ	Ի	Ս		Օ	Մ	Ե	Կ
13	Ն	Ա		Հ	Ե	Տ	Ք		Լ	Ա	Ր	Ա	Կ	Ա
14	Ի	Ծ	Ղ	Ա	Ր		Է	Մ	Ի	Ր		Թ	Ո	Ն
15														
16														
17														
18														
19														
20	Գ	Ա	Ր	Է	Տ		Ն	Ո		Ն	Օ	Թ	Ծ	Ե



ՀԱՅԱՍՏԱՆ